

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՅԱՏՈՒՄԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Կարեն Հովհաննեսի
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Մեթոդական
Ձեռնարկ

ԵՐԵՎԱՆ
2025



Երաշխավորվել է հրատարակության
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Գիտական խորհրդի կողմից 25.09.2025 թվականին

**ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Մեթոդական ձեռնարկ

**Կարեն Հովհաննեսի
ՄԱՄԻԿՈՆՅԱՆ**

Հեղինակային հրատարակություն

**ԵՐԵՎԱՆ
2025**

Հեղինակ՝

Կարեն Հովհաննեսի ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

յրնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
Գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ, դատական փորձագետ:

Գրախոսներ՝

Լիանա Հայկազի ԳՐԻԳՈՐՅԱՆ

յրնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի պետական յրնտեսագիտական համալսարանի
Կառավարչական հաշվառման և աուդիտի ամբիոնի վարիչ:

Սամվել Գրիգորի ԱՄԻՐԻԱՆՅԱՆ

յրնտեսագիտության թեկնածու, դոցենտ, Գավառի պետական
համալսարանի Կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ:

Արմինե Սուրենի ԲԱՐՈՅԱՆ

յրնտեսագիտության թեկնածու, Հայաստանի պետական
յրնտեսագիտական համալսարանի Ֆինանսների ամբիոնի դասախոս:

Մամիկոնյան Կ.Հ.

Մ 223 **Ոչ նյութական ակտիվների գնահատումը ֆինանսատնտեսագիտական
փորձաքննությունների շրջանակներում:** Մեթոդական ձեռնարկ /
Կ.Հ. Մամիկոնյան. - Եր.: Հեղ. հրատ., 2025.- 78 էջ:

Ձեռնարկում քննարկվում են ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների
շրջանակներում կազմակերպությունների ոչ նյութական ակտիվների շուկայական արժեք-
ների որոշման կիրառական մեթոդաբանության հարցեր: Աշխատանքում մտավոր
սեփականության՝ որպես շոշափելի ձև և ֆիզիկապես գոյություն չունեցող ռեսուրսների ոչ
նյութական բնույթից ածանցվող արժեքը ներկայացվել է որպես ընկերության ընդհանուր
արժեքի ձևավորմանը զգալիորեն նպաստող և գնահատման ենթակա բաղադրիչ:

Վերոնշյալ մոտեցման խորապատկերին ֆինանսատնտեսագիտական փորձագի-
տական հետազոտության նպատակը կայանում է՝ ոչ նյութական ակտիվների հնարա-
վորինն շուկայականին ձգտող արդար տնտեսական արժեքի ձևավորման, վերջինովս
պայմանավորված կազմակերպության ակտիվների կազմում դրա լիարժեք արտացոլման,
և փաստորեն՝ ներդրումային թափանցիկության ու ներդրողների շահերի պաշտպա-
նության տեսանկյունից նաև ընկերության իրական արժեքի ձևավորման ապահովման
հետ կապված խնդիրների հետազոտման մեջ: Այս իմաստով, սույն մեթոդական
ձեռնարկում մտավոր սեփականության էության և դրա տնտեսական դերի ուսումնա-
սիրության հարցերում գիտական մոտեցումները վերաիմաստավորել և խորացվել են:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
§ 1. Մտավոր սեփականության օբյեկտի՝ որպես ոչ նյութական ակտիվի էությունը.....	7
§ 2. Ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքը.....	13
§ 3. Ապրանքային նշանի արժեքի որոշումը կումուլյատիվ կառուցման մեթոդի միջոցով	21
§ 4. Համակարգչային ծրագրի արժեքի որոշման մոտեցումները	35
§ 5. Վեբ կայքի արժեքի որոշման մոտեցումները.....	46
§ 6. Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների արժեքների որոշման մոտեցումները	59
Օգտագործված գրականություն	74

Նախաբան

Տնտեսագիտական մտքի ներկայիս զարգացման պայմաններում ոչ նյութական ակտիվների դերը զգալիորեն աճել է՝ պայմանավորված նորարարական տնտեսության և թվային միջավայրի գերակշռող ազդեցությամբ: Մտավոր սեփականության օբյեկտները (ՄՍՕ)¹ որպես կազմակերպությունների կողմից կառավարվող և տնտեսական շահ ստանալու ներուժ ունեցող ոչ նյութական ռեսուրսներ, արժանացել են առանձնահատուկ ուշադրության: Վերջին տարիների բազմաթիվ հետազոտություններում վերլուծվել են մտավոր ակտիվների՝ հատկապես կազմակերպության արժեքային շղթայում ունեցած ռազմավարական դերը¹:

Տնտեսագիտական գրականության մեջ խորությամբ ուսումնասիրված են մտավոր սեփականության իրավական բնույթի և տնտեսական բովանդակության փոխկապակցվածությունները: Տվյալ ոլորտն ընդգրկող առավել թարմ գիտական աշխատանքների հրապարակումներում խորությամբ վերլուծվում են մտավոր սեփականության իրավական և տնտեսական բնույթը, կառավարման մեխանիզմները, հաշվառման և գնահատման մեթոդները: Հատկապես կարևորվում է հեղինակային և հարակից իրավունքների, արդյունաբերական սեփականության օբյեկտների, ինչպես օրինակ՝ ապրանքային նշանների, համակարգչային

¹ 1) Petty, R., & Guthrie, J. (2020). Intellectual capital literature review: Measurement, reporting and management. *Journal of Intellectual Capital*, 1(2), 155–176. DOI: <https://doi.org/10.1108/14691930010348731>,

2) Sveiby, K. E. (2010). Methods for measuring intangible assets. *Journal of Intellectual Capital*, 1(1), 68–84. DOI: <https://doi.org/10.1108/14691930110385932>,

3) Lev, B. (2019). *The End of Accounting and the Path Forward for Investors and Managers*. Wiley.

ծրագրերի, վեբ կայքերի, գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների և այլ ոչ նյութական ակտիվների ներառումը կազմակերպությունների ընդհանուր ակտիվների կառուցվածքում: Այս համատեքստում ուշագրավ է հատկապես միջազգային փորձը, որն ընդգծում է մտավոր սեփականության օբյեկտների ռազմավարական կառավարումը՝ որպես ներդրումային գրավչության, եկամտաբերության և կապիտալի համալրման միջոց:

Մտավոր սեփականությունը ներկայացնում է համադրություն՝ իրավունքի, տեղեկատվության և նորարարական ներուժի, որը կարող է փոխակերպվել տնտեսական արժեքի²: Պետք է ընդունել, որ ժամանակակից հաշվապահական մոդելները հաճախ չեն արտացոլում մտավոր ակտիվների իրական արժեքները, ինչն ավելի է բարդացնում գնահատման և կառավարման գործընթացները³:

Հայաստանյան գիտական հարթակներում նույնպես դիտվում են այս ոլորտում հետազոտությունների արդյունքների հրապարակումների ակտիվացում՝ կապված մտավոր սեփականության օբյեկտների տնտեսական գնահատման և կառավարման խնդիրների լուծման հետ: Մասնավորապես, ներկայացվում է, որ մտավոր սեփականության՝ որպես տնտեսական ռեսուրսի, ամբողջական ներթափանցումը դատական հաշվապահական և ֆինանսատնտեսագիտական ոլորտներ պահանջում է հատուկ մեթոդա-

² Bontis, N. (2018). Intellectual capital: An exploratory study that develops measures and models. *Journal of Management Studies*, 36(1), 63–74. DOI: <https://doi.org/10.1111/1467-6486.00078>

³ Lev, B., & Gu, F. (2016). *The End of Accounting and the Path Forward for Investors and Managers*. John Wiley & Sons.

կան մոտեցումների մշակում՝ հաշվի առնելով ազգային իրավական դաշտի առանձնահատկությունները⁴:

Երկարաժամկետ տեսանկյունից ակնհայտ է, որ մտավոր սեփականության արդյունավետ կառավարումը, հաշվառումը և արժևորման մեխանիզմների ներդրումը դառնում են կազմակերպությունների մրցունակության, ներդրումային գրավչության և ֆինանսական կայունության հիմնական գործոններից: Այս հիմնավորմամբ էլ արդիական է դիտարկել մտավոր սեփականության օբյեկտի էությունը ոչ միայն իրավական դիրքերից, այլև որպես շուկայում չափելի և կառավարվող ոչ նյութական ակտիվ: Հետազոտական տվյալների համադրումը վկայում է, որ չնայած տարբեր երկրների օրենսդրական դաշտերում առկա սահմանումներին ու բնորոշումներին, ինչպես նաև ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական մոտեցումների տարբերություններին, ընդհանուր միտումը (կամ դինամիկան) միանշանակ զգալի և տեսանելի է. մտավոր սեփականության օբյեկտները դիտվում են ոչ միայն որպես իրավական իրավունքներ, այլև՝ որպես արժեք ստեղծող տնտեսական ռեսուրսներ:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում վերաիմաստավորելու և խորացնելու գիտական մոտեցումները մտավոր սեփականության էության և դրա տնտեսական դերի ուսումնասիրության հարցերում՝ ոչ նյութական ակտիվների կառավարման և արժևորման արդի մարտահրավերների և տնտեսական իրողությունների պայմաններում:

⁴ Мамиконян К.О. Особенности оценки рыночной стоимости объектов интеллектуальной собственности при проведении судебных экспертиз / Теория и практика судебной экспертизы. 2019. Том 14. № 2. С. 128–135. DOI: <https://doi.org/10.30764/1819-2785-2019-14-2-128-135>.

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ,
տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների
բաժնի փորձագետ:

КАРЕН ОГАНЕСОВИЧ МАМИКОНЯН
кандидат экономических наук, доцент,
*начальник отдела координации научных исследований
и технического апробирования,
эксперт отдела экономических и бухгалтерских экспертиз
Национального бюро экспертиз Республики Армения.*

KAREN H. MAMIKONYAN
Ph.D in Economics, Associate Professor,
*Head of the Scientific Research and Technical Testing
Coordination Department,
Expert of the Department of Economic and Accounting Expertise
of National Bureau of Expertises of the Republic of Armenia.*

**ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

Մեթոդական ձեռնարկ

Հեղինակային հրատարակություն

**ԵՐԵՎԱՆ
2025**

Չափսը՝ 60x84 * 1/16:
Ծավալը՝ 4.8 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 350:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
§ 1. Մտավոր սեփականության օբյեկտի՝ որպես ոչ նյութական ակտիվի էությունը.....	7
§ 2. Ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքը.....	13
§ 3. Ապրանքային նշանի արժեքի որոշումը կումուլյատիվ կառուցման մեթոդի միջոցով	21
§ 4. Համակարգչային ծրագրի արժեքի որոշման մոտեցումները	35
§ 5. Վեբ կայքի արժեքի որոշման մոտեցումները.....	46
§ 6. Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների արժեքների որոշման մոտեցումները	59
Օգտագործված գրականություն	74

Նախաբան

Տնտեսագիտական մտքի ներկայիս զարգացման պայմաններում ոչ նյութական ակտիվների դերը զգալիորեն աճել է՝ պայմանավորված նորարարական տնտեսության և թվային միջավայրի գերակշռող ազդեցությամբ: Մտավոր սեփականության օբյեկտները (ՄՍՕ)¹ որպես կազմակերպությունների կողմից կառավարվող և տնտեսական շահ ստանալու ներուժ ունեցող ոչ նյութական ռեսուրսներ, արժանացել են առանձնահատուկ ուշադրության: Վերջին տարիների բազմաթիվ հետազոտություններում վերլուծվել են մտավոր ակտիվների՝ հատկապես կազմակերպության արժեքային շղթայում ունեցած ռազմավարական դերը¹:

Տնտեսագիտական գրականության մեջ խորությամբ ուսումնասիրված են մտավոր սեփականության իրավական բնույթի և տնտեսական բովանդակության փոխկապակցվածությունները: Տվյալ ոլորտն ընդգրկող առավել թարմ գիտական աշխատանքների հրապարակումներում խորությամբ վերլուծվում են մտավոր սեփականության իրավական և տնտեսական բնույթը, կառավարման մեխանիզմները, հաշվառման և գնահատման մեթոդները: Հատկապես կարևորվում է հեղինակային և հարակից իրավունքների, արդյունաբերական սեփականության օբյեկտների, ինչպես օրինակ՝ ապրանքային նշանների, համակարգչային

¹ 1) Petty, R., & Guthrie, J. (2020). Intellectual capital literature review: Measurement, reporting and management. *Journal of Intellectual Capital*, 1(2), 155–176. DOI: <https://doi.org/10.1108/14691930010348731>,

2) Sveiby, K. E. (2010). Methods for measuring intangible assets. *Journal of Intellectual Capital*, 1(1), 68–84. DOI: <https://doi.org/10.1108/14691930110385932>,

3) Lev, B. (2019). *The End of Accounting and the Path Forward for Investors and Managers*. Wiley.

ծրագրերի, վեբ կայքերի, գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների և այլ ոչ նյութական ակտիվների ներառումը կազմակերպությունների ընդհանուր ակտիվների կառուցվածքում: Այս համատեքստում ուշագրավ է հատկապես միջազգային փորձը, որն ընդգծում է մտավոր սեփականության օբյեկտների ռազմավարական կառավարումը՝ որպես ներդրումային գրավչության, եկամտաբերության և կապիտալի համալրման միջոց:

Մտավոր սեփականությունը ներկայացնում է համադրություն՝ իրավունքի, տեղեկատվության և նորարարական ներուժի, որը կարող է փոխակերպվել տնտեսական արժեքի²: Պետք է ընդունել, որ ժամանակակից հաշվապահական մոդելները հաճախ չեն արտացոլում մտավոր ակտիվների իրական արժեքները, ինչն ավելի է բարդացնում գնահատման և կառավարման գործընթացները³:

Հայաստանյան գիտական հարթակներում նույնպես դիտվում են այս ոլորտում հետազոտությունների արդյունքների հրապարակումների ակտիվացում՝ կապված մտավոր սեփականության օբյեկտների տնտեսական գնահատման և կառավարման խնդիրների լուծման հետ: Մասնավորապես, ներկայացվում է, որ մտավոր սեփականության՝ որպես տնտեսական ռեսուրսի, ամբողջական ներթափանցումը դատական հաշվապահական և ֆինանսատնտեսագիտական ոլորտներ պահանջում է հատուկ մեթոդա-

² Bontis, N. (2018). Intellectual capital: An exploratory study that develops measures and models. *Journal of Management Studies*, 36(1), 63–74. DOI: <https://doi.org/10.1111/1467-6486.00078>

³ Lev, B., & Gu, F. (2016). *The End of Accounting and the Path Forward for Investors and Managers*. John Wiley & Sons.

կան մոտեցումների մշակում՝ հաշվի առնելով ազգային իրավական դաշտի առանձնահատկությունները⁴:

Երկարաժամկետ տեսանկյունից ակնհայտ է, որ մտավոր սեփականության արդյունավետ կառավարումը, հաշվառումը և արժևորման մեխանիզմների ներդրումը դառնում են կազմակերպությունների մրցունակության, ներդրումային գրավչության և ֆինանսական կայունության հիմնական գործոններից: Այս հիմնավորմամբ էլ արդիական է դիտարկել մտավոր սեփականության օբյեկտի էությունը ոչ միայն իրավական դիրքերից, այլև որպես շուկայում չափելի և կառավարվող ոչ նյութական ակտիվ: Հետազոտական տվյալների համադրումը վկայում է, որ չնայած տարբեր երկրների օրենսդրական դաշտերում առկա սահմանումներին ու բնորոշումներին, ինչպես նաև ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական մոտեցումների տարբերություններին, ընդհանուր միտումը (կամ դինամիկան) միանշանակ զգալի և տեսանելի է. մտավոր սեփականության օբյեկտները դիտվում են ոչ միայն որպես իրավական իրավունքներ, այլև՝ որպես արժեք ստեղծող տնտեսական ռեսուրսներ:

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում վերաիմաստավորելու և խորացնելու գիտական մոտեցումները մտավոր սեփականության էության և դրա տնտեսական դերի ուսումնասիրության հարցերում՝ ոչ նյութական ակտիվների կառավարման և արժևորման արդի մարտահրավերների և տնտեսական իրողությունների պայմաններում:

⁴ Мамиконян К.О. Особенности оценки рыночной стоимости объектов интеллектуальной собственности при проведении судебных экспертиз / Теория и практика судебной экспертизы. 2019. Том 14. № 2. С. 128–135. DOI: <https://doi.org/10.30764/1819-2785-2019-14-2-128-135>.

§ 1. Մտավոր սեփականության օբյեկտի՝ որպես ոչ նյութական ակտիվի էությունը

«Մտավոր սեփականության օբյեկտը» (ՄՍՕ) բավականին լայն հասկացություն է: համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի մտավոր սեփականության օբյեկտներ են մտավոր գործունեության արդյունքները և քաղաքացիական շրջանառության մասնակիցների, ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների անհատականացման միջոցները⁵, մասնավորապես՝ գիտական, գեղարվեստական և գրական ստեղծագործությունները, ստեղծագործական գործունեության արդյունքները, այդ թվում՝ հայտնագործությունները, գյուտերը, հայտնագործությունները, արդյունաբերական նմուշները, համակարգչային ծրագրերը, տվյալների բազաները, առևտրային գաղտնիքները, ֆիրմային անվանումները և սպասարկման նշանները, պաշտպանությանը անբարեխիղճ մրցակցությունից, ինչպես նաև բոլոր այլ իրավունքները, որոնք բխում են մտավոր գործունեությունից արդյունաբերական, գիտական, գրական և գեղարվեստական բնագավառներում:

Ի դեպ, երբ խոսքը վերաբերում է «Հեղինակային իրավունքի օբյեկտ» հասկացությանը, ապա այն գրականության, գիտության և արվեստի բնագավառներում հեղինակի ինքնուրույն կամ այլ հեղինակների հետ իրականացրած ստեղծագործական աշխատանքի յուրօրինակ արդյունք (ստեղծագործություն) է, որն արտահայտված է բանավոր, գրավոր կամ այլ օբյեկտիվ ձևով, ներառյալ՝ մշտապես կամ ժամանակավոր պահպանվող էլեկտրո-

⁵ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1100-րդ հոդված:

նային ձևով, անկախ ստեղծագործության ծավալից, նշանակությունից, արժանիքներից ու ստեղծման նպատակից⁶:

Սույն մեթոդական ձեռնարկում անրադարձ է կատարվել հատկապես ապրանքային նշանների, ֆիրմային անվանումների, գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների (օգտակար մոդելներ և լավարարական առաջարկներ) շուկայական արժեքների որոշման կիրառական մեթոդաբանության հարցերին: Սակայն, նախ հարկ է ներկայացնել դրանցից յուրաքանչյուրի էությունը գիտական ճանաչողականության տեսանկյունից:

Ապրանքային նշանը ցանկացած նշան է, որն անհատականացնում է տվյալ ձեռնարկության ապրանքը և օգնում դա տարբերել մրցակցի արտադրանքից: Ընկերությունը համբավ է ձեռք բերում որպես տվյալ ապրանքային նշանով ապրանքներ արտադրող: Ապրանքային և սպասարկման նշանն այն նիշն է, որն օգտագործվում է մեկ անձի ապրանքները և (կամ) ծառայությունները այլ անձի ապրանքներից և (կամ) ծառայություններից տարբերելու համար⁷: Ապրանքային նշանի իրավատերը բացառիկ իրավունք ունի տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու ապրանքային նշանը, ինչպես նաև այլ անձանց թույլատրելու կամ արգելելու դրա օգտագործումը⁸:

Ֆիրմային անվանումները պարունակում են տերմիններ կամ անվանումներ, որոնց նշանակությունը ընկերությունը և նրա գործունեությունը այլ արտադրողներից տարբերելն է: Այն դեպքում, երբ ապրանքային նշանները տարբերում են մեկ

⁶ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդված:

⁷ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1171-րդ հոդվածի 1-ին մաս:

⁸ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1172-րդ հոդվածի 1-ին մաս:

արտադրողի ապրանքներն ու ծառայությունները մյուսից, ընկերության անվանումը մատնանշում է նրա բոլոր ձեռնարկությունները՝ անկախ դրանց կողմից շուկայում իրացվող ապրանքներից ու ծառայություններից, և այն համապատասխան ընկերության համբավի խորհրդանիշն է: Ֆիրմային անվանումն այն անվանումն է, որի ներքո առևտրային կազմակերպությունը իրականացնում է իր գործունեությունը և տարբերվում այլ իրավաբանական անձանցից⁹: Ֆիրմային անվանման իրավատերը բացառիկ իրավունք ունի՝ ա) օգտագործելու իր ֆիրմային անվանումը, բ) արգելելու երրորդ անձանց օգտագործել իր ֆիրմային անվանումը կամ դրան շփոթելու աստիճան նման անվանում կամ իր ֆիրմային անվանմանը շփոթելու աստիճան նման ապրանքային նշան, եթե դա կարող է սպառողին մոլորության մեջ գցել և պատճառ դառնալ դրանց միջև կապ ենթադրելու՝ հաշվի առնելով, որ դա կարող է վնաս հասցնել ֆիրմային անվանման իրավատիրոջը¹⁰:

Գյուլտերը, հայտնագործությունները և արդյունաբերական նմուշները (օգտակար մոդել, լավարարական առաջարկ, միկրոսխեմա, դիզայն) որպես ոչ նյութական ակտիվներ մտավոր գործունեության արդյունքներ են, որոնք չունեն նյութական մարմին, սակայն ունեն իրավական ճանաչում և կարող են կազմակերպության համար ապահովել ապագա տնտեսական օգուտներ (եկամուտների ավելացման կամ ծախսերի կրճատման միջոցով), ստեղծել մրցակցային առավելություններ, ինչպես նաև եկամտաբերության նոր հնարավորություններ՝ ունենալով

⁹ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1166.1-րդ հոդվածի 1-ին մաս:

¹⁰ ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1167-րդ հոդվածի 2-րդ մաս:

իրավական պաշտպանություն (արտոնագրերի, լիցենզիաների և օգտագործման այլ պայմանագրերի միջոցով):

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության հետ կապված փորձաքննությունները բնորոշվում են զգալի բարդությամբ, իսկ որոշ դեպքերում՝ նաև բացառիկությամբ: Նման փորձաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ են ոչ միայն մտավոր սեփականության իրավունքի, այլ նաև գործունեության այն բնագավառի գիտելիքներ, որին պատկանում է տվյալ վիճահարույց մտավոր սեփականությունը: Մտավոր սեփականությունը, ինչպես նշվեց, յուրատեսակ հիմք է համարվում կազմակերպության ոչ նյութական ակտիվների ձևավորման համար, հետևաբար մտավոր գործունեության արդյունքներն ավելի ու ավելի կարևոր դեր են խաղում երկարաժամկետ հեռանկարում շուկայում կայուն եկամուտ ստանալու համար: Այդ իսկ պատճառով «մտավոր սեփականություն» հասկացությունը հանդես է գալիս ինչպես ֆինանսների, հաշվապահական հաշվառման, այնպես էլ կառավարման և գնահատման գործունեության մեջ: Այնուամենայնիվ, այս հայեցակարգի սահմանումը տարբեր է թե՛ գործունեության տարբեր տեսակների և թե՛ տարբեր երկրների ազգային հաշվառման սկզբունքներում:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց առնչությամբ փորձագիտական հետազոտությունն անցկացնելու անհրաժեշտություն կարող է առաջանալ, երբ խախտվել են ստեղծագործական աշխատանքի այս կամ այն արդյունքը տնօրինելու նրանց իրավունքները: Մտավոր սեփականության օբյեկտների (ՄՍՕ) փորձաքննությունը հատուկ հետազոտություն է, որի ընթացքում որոշվում են ինչպես տվյալ օբյեկտների բնութագրերը, այնպես էլ իրական արժեքները:

Ոչ նյութական ակտիվներին այժմ անդրադառնալով, հարկ է նշել, որ դրանց շարքին են դասվում տնտեսական գործունեության մեջ երկար ժամանակահատվածում օգտագործվող և եկամուտ բերող իրավունքները, որոնք բխում են՝

ա) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործությունների, համակարգչային ծրագրերի, տվյալների բազայի և հեղինակային ու այլ պայմանագրերից,

բ) գյուտից, հայտնագործությունից, արդյունաբերական նմուշից (օգտակար մոդել, լավարարական առաջարկ, միկրոսխեմա, դիզայն),

գ) ապրանքային նշանից, ֆիրմայի անվանումից և այլն,

դ) «նոու-հաու»-ի (արտադրական գաղտնիքի) իրավունքից և այլն:

Ոչ նյութական ակտիվի արժեքն աժանցվում է դրա ոչ նյութական բնույթից¹¹: Այս կանխադրույթի զարգացմանմանը կարելի է նաև վկայակոչել «Ոչ նյութական ակտիվներ» Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) 38-ի 17-րդ կետը. «Ոչ նյութական ակտիվից առաջացող ապագա տնտեսական օգուտները կարող են ներառել ապրանքների կամ ծառայությունների իրացումից հասույթի, ծախսումների տնտեսման կամ այլ օգուտների տեսքով, որոնք առաջանում են կազմակերպության կողմից այդ ակտիվի օգտագործման արդյունքում: Օրինակ՝ արտադրական գործընթացում մտավոր սեփականության օգտագործումը կարող է հանգեցնել ապագա արտադրական ծախսումների կրճատմանը, այլ ոչ թե ապագա հասույթների ավելացմանը:»:

¹¹ Reilly R.F., Schweih R.P. Guide to Intangible Asset Valuation. 2nd Revised Edition. New York: Wiley, 2016. 784 p.

Համաձայն վերոհիշյալ ստանդարտի 21-րդ կետի՝ «Ոչ նյութական ակտիվը պետք է ճանաչվի միմիայն այն դեպքում, երբ՝ ա) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն. բ) ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել»:

Ոչ նյութական ակտիվների գնահատման ժամանակ սովորաբար տարբերակում են դրանց մի շարք նպատակային նշանակության կատեգորիաներ, այդ թվում՝ «առևտրային», «մարքեթինգային», «տեխնոլոգիական», «պայմանագրային», «հաճախորդային» և «կազմակերպչական»¹²: Այս տարանջատումը հիմնված է ակտիվների բնույթի, դրանց գործառնական նշանակության, շուկայական արժեքի ձևավորման մեխանիզմների և տնտեսական ազդեցությունների վրա, ինչը կարևոր դեր է խաղում գնահատման գործընթացում և ռազմավարական որոշումների ընդունման դեպքում:

¹² Միջազգային գնահատման ստանդարտներ (IVS), 210 բաժին:

§ 2. Ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքը

Ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքը գնահատելու համար հիմնական ընդունված մոտեցումներից (ծախսային, համեմատական, եկամտային) առավել հարմար է եկամտային մոտեցումը, քանի որ մտավոր սեփականության օգտագործումից ստացված եկամուտն է առավելագույն կերպով որոշում ոչ նյութական ակտիվի շուկայական մոտարկվող արժեքը: Այդուամենայնիվ, առանձին դեպքերում կարող են օգտագործվել վերը նշված հիմնական մոտեցումներում ներառված տարատեսակ մեթոդների համալիր:

Եկամտային մոտեցման կիրառման պարագայում մտավոր սեփականության օբյեկտի շուկայական արժեքի գնահատումն իրենից ենթադրում է դրա օգտագործումից ստացված եկամուտների որոշում՝ զեղչման (դիսկոնտավորման) կամ կապիտալիզացիայի միջոցով: Այս պարագայում շահութաբերության ցուցանիշը կարող է լինել կամ ստացվող շահույթը, կամ էլ՝ դրամական հոսքը:

Կարևոր է ընդգծել, որ կազմակերպության ակտիվների, ներառյալ ոչ նյութական ակտիվների (մտավոր սեփականության օբյեկտների) գնահատումը որոշիչ նշանակություն ունի դրանց իրական շուկայական արժեքը և ներդրումային գրավչությունը որոշելու համար: Վերոնշյալի համատեքստում արդյունաբերական ձեռնարկությունների սեփականություն հանդիսացող ոչ նյութական ակտիվներին պետք է վերագրել ապրանքանիշերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, գյուտերը, հայտնագործությունները, արդյունաբերական նմուշները (օգտակար մոդելները, լավարարական առաջարկները), ծրագրային ապահովումները, բույսերի տեսակները և միկրոօրգանիզմների շտամները,

սելեկցիոն ձեռքբերումները այլ մտավոր սեփականության իրավունքները (արտոնագրերը, լիցենզիաները, օգտագործման պայմանագրերը և այլն):

Մտավոր սեփականության օբյեկտը գնահատվում է եկամտային մոտեցմամբ, երբ հնարավոր է հուսալիորեն կանխատեսել այն եկամուտները, որոնք կարող են ստացվել այդ օբյեկտի օգտագործումից: Իսկ եթե մտավոր սեփականության օբյեկտը նախկինում չի օգտագործվել, ապա հնարավոր եկամտի միակ ձևը՝ այդ օբյեկտի օգտագործման իրավունքի վաճառքից միանվագ եկամուտն է:

Եկամտային մոտեցման հիմնական նշանակությունը կայանում է սեփականատիրոջ եկամուտների փաստացի տվյալների կանխատեսման կամ օգտագործման մեջ, որոնք ստացվում են գնահատման արդյունքներով իրավունքների օգտագործումից, դրանց կառուցվածքից (ծախսումներ, շահույթ) և որպես գնահատվող օբյեկտի ցանկալի արժեք ընդունվող շահույթի մասնաբաժնի գնահատումից:

Եկամտային մոտեցման շրջանակներում մտավոր սեփականության գնահատման ժամանակ լայնորեն կիրառվում են հետևյալ մեթոդները.

- ռոյալթիից ազատում,
 - ավելցուկային շահույթ,
 - առավելություն շահույթում,
 - գրինֆիլդ,
 - դիստրիբյուտոր,
- ինչպես նաև՝
- դրամական հոսքերի ուղղակի զեղչում,
 - եկամուտների ուղղակի կապիտալացում,

- ինքնարժեքում շահում (այս դեպքում մտավոր սեփականության օբյեկտը թույլ է տալիս տնտեսել և շահել արտադրական ծախսերի գծով):

Հարկ է նշել, որ առաջին հինգ մեթոդները խորհուրդ են տրվում Միջազգային գնահատման ստանդարտներով¹³:

Համարվում է, որ եկամտային մոտեցման բարդ մեթոդները հիմնված են դրամական հոսքերի զեղչման վրա (եկամուտների հուսալի կանխատեսման հնարավորության դեպքում), իսկ առավել պարզերը՝ շահույթի ուղղակի կապիտալացման վրա:

Ռոյալթիից ազատման մեթոդն օգտագործվում է ընդհանուր շուկայում մտավոր սեփականության օբյեկտների արժեքը գնահատելու նպատակով, և դրա կիրառման պարագայում պահանջվում է, որ ընթացակարգերից մեկը հանդիսանա ռոյալթիի համապատասխան դրույքաչափի գնահատումը՝ օբյեկտների վերլուծության մեջ օգտագործման համար¹⁴:

Այս մեթոդն առավել հարմար է արտոնագրերի և լիցենզիաների գնահատման համար՝ դրանց վաճառքի դեպքում: Մտավոր սեփականության օբյեկտի արժեքը հաշվարկվում է զեղչման միջոցով, ինչը թույլ է տալիս որոշել ռոյալթիի չափը, որը ընկերությունը պետք է վճարի, երբ տվյալ օբյեկտի սեփականատեր չի հանդիսանում:

Ռոյալթիից ազատման մեթոդի տնտեսական էությունը հիմնված է մտավոր սեփականության լիցենզիայի օգտագործումից ստացվող շահույթի բաշխման ենթադրության վրա՝ լիցենզիարի (սեփականատիրոջ) և լիցենզիատի (իրավունքը ստացողի) միջև արդար համամասնության համաձայնեցմամբ: Հիմնական ենթա-

¹³ Միջազգային գնահատման ստանդարտներ (IVS) 210 բաժին, 60.5 պարագրաֆ:

¹⁴ Nielsen J.M. //Guidance for Applying the Relief from Royalty Method to Value Trademarks and Trade Names / Insights. 2018. P. 52–58//, էջ 3:

դրությունը ռոյալթի դրույքաչափն է: Ռոյալթին իրենից ներկայացնում է կանոնավոր վճարումներ, որոնք հաշվարկվում են որպես լիցենզավորված արտադրանքի վաճառքից ստացված հասույթից տոկոս: Հարկ է նշել, որ արդյունաբերության տարբեր ոլորտներում ռոյալթի ստանդարտ դրույքաչափեր նաև հրապարակվում են մասնագիտացված գրականության միջոցով:

Ռոյալթից ազատման մեթոդն օգտագործելիս գործում է ենթադրություն, որ արտոնագիրը (հավաստագիրը) տիրապետում է երրորդ կողմը, և հետևաբար, իրական տիրապետողը պետք է վճարի ռոյալթներ՝ օգտագործման իրավունքի համար: Սակայն արտոնագիրն իրականում այն տիրապետողի սեփականությունն է, և նրան պետք չէ վճարել ռոյալթներ, այդ իսկ պատճառով մեթոդը կոչվում է «ռոյալթից ազատում», այսինքն՝ ծախսերի խնայողություն¹⁵: Այլ կերպ ասած՝ եթե գնահատման օբյեկտը պատկանում է իրական սեփականատիրոջը, որին պետք չէ վճարել ռոյալթներ, ապա տեղի է ունենում ծախսերի կեղծ խնայողություն, այսինքն՝ «ազատում ռոյալթից»: Ժամանակակից գիտական գրականության մեջ այս մեթոդը կոչվում է նաև արդյունաբերության ստանդարտ մեթոդ կամ արժեքի աճի մեթոդ:

Այսպիսով, դրամական հոսքերի հաշվարկման մեթոդը հիմնվում է երկու ենթադրության վրա.

- ա) գնահատվող օբյեկտը չի պատկանում իրական սեփականատիրոջը,
- բ) ժամանակավոր սեփականատերը պետք է վճարի ռոյալթներ, քանի որ օբյեկտը նրան տրամադրվում է լիցենզիայի հիմունքներով:

¹⁵ Леонтьев Б.Б., Мамаджанов Х.А. // Принципы и подходы к оценке интеллектуальной собственности и нематериальных активов. Учеб. пособие. М.: Ринфо, 2003. 270 с.//, էջ 185:

Մտավոր սեփականության օբյեկտի արժեքը ռոյալթիից ազատման մեթոդի օգնությամբ հաշվարկված դրամական հոսքերի զեղչման մեթոդով որոշելու համար օգտագործվում է հետևյալ կախվածությունը.

$$C = \sum_{i=1}^N \frac{V_i C_i R}{(1+r)^i}, \quad (1)$$

որտեղ՝ C – ՄՍՕ արժեքն է,

V_i – i տարում ՄՍՕ-ի օգտագործմամբ արտադրված արտադրանքի ծավալը,

C_i – i տարում ՄՍՕ-ի օգտագործմամբ արտադրանքի միավորի վաճառքի գինը,

R – i տարում ռոյալթիի չափը,

i – լիցենզիոն պայմանագրի կնքման ենթադրյալ ժակետը (ժամանակահատվածը, որի ընթացքում կպահպանվի շահույթի առավելությունը),

r – i տարում դիսկոնտավորման գործակիցը:

Ի դեպ, դիսկոնտավորման գործակիցը (r -ը) հաշվարկելիս կարող է նաև օգտագործվել ընկերության կապիտալի միջին կշռված արժեքի (WACC - Weighted Average Cost of Capital) գնահատումը:

Մտավոր սեփականության օբյեկտի արժեքի քայլ առ քայլ հաշվարկը ներառում է.

1. Մտավոր սեփականության օբյեկտի զուտ վաճառքի գնահատում առաջիկա 3-ից 5 տարիների համար:
2. Ռոյալթիի ողջամիտ դրույքաչափի որոշում, որը երկու ոչ փոխկապակցված կողմեր կսահմանեն համադրելի մտավոր սեփականության օբյեկտի փոխանցման համար: Ռոյալթիի դրույքաչափը կախված է մտավոր սեփականության օբյեկտի համբավից (վարկանշից), պայմանագրի տևողությունից,

բացառիկությունից, կողմերի բանակցային լիազորություններից, արտադրանքի կյանքի ցիկլից և տեղական շուկայում վաճառքի դեպքում ստացվող մարժայից:

3. Ռոյալթիի գնահատված տոկոսադրույքի բազմապատկում ընկերության կանխատեսվող վաճառքներին՝ տարեկան ռոյալթիի խնայողությունների նպատակով:
4. Հարկերի վճարումից հետո ռոյալթիի խնայողությունների գնահատում:
5. Մտավոր սեփականության արժեքի մշտական աճի տեմպերի, դրա օգտակար ծառայության տնտեսական ժամկետի և գեղչադրույքի, ինչպես նաև հարկումից հետո գեղչի վճարի գնահատում¹⁶:

Այսուհանդերձ, ռոյալթիի դրույքաչափը կարելի է որոշել՝ օգտագործելով հետևյալ մոտեցումները.

– *Էմպիրիկ մոտեցում* (փորձով հաստատված), որի դեպքում ռոյալթիի դրույքաչափը պայմանական կերպով կարելի է սահմանել որպես լիցենզիատի գործառնական շահույթի 25%-ը կամ որպես վաճառքից հասույթի 5-8%-ը: Հարկ է նշել, որ գոյություն ունեն ռոյալթիի դրույքաչափի գնահատման մի քանի տարբերակներ, օրինակ՝ մտավոր սեփականության համբավը (վարկանիշը), գործառնական մարժայի դիֆերենցիալը, կլաստերային կամ խմբային վերլուծություն, շուկայի համեմատության մեթոդ և այլ մոդելներ, որոնք պայմաններ են ստեղծում լիցենզիարի և լիցենզիատի միջև բանակցությունների համար:

– *Հաշվարկային մոտեցում*, որի դեպքում կարելի է օգտագործել մարժինալ (սահմանային) ռոյալթիի մեթոդը (լիցենզիատի հավելյալ

¹⁶ Bulgarelli F. /Methods of Brand Valuation: A case study on Alibaba.com. 2015/, էջ 17:

շահույթի մեծության հաշվարկ), որը հիմնված է լիցենզիատի համախառն շահույթում լիցենզիարի մասնաբաժնի հաշվառման վրա:

Հիմնվելով ապագա դրամական հոսքերի զեղչման (Discounted Free Future Cash-Flows – DCF) մեթոդի վրա, գնահատողը պարտավոր է մտավոր սեփականության օբյեկտի կողմից գեներացման ենթակա կանխատեսվող եկամուտները համապատասխան զեղչման (դիսկոնտավորման) տոկոսադրույքով բերել զուտ ներկա արժեքին:

Այն գնահատման օբյեկտների համար, որոնք օգտագործումից հավասար ժամանակահատվածներում անհավասար դրամական հոսքեր են բերում, դրանց արժեքների մեծությունը որոշվում է մտավոր սեփականության օբյեկտի օգտագործումից՝ ապագա դրամական հոսքերի զեղչման ճանապարհով:

Մտավոր սեփականության օբյեկտի ընթացիկ արժեքը դրամական հոսքերի զեղչման մեթոդով որոշվում է հետևյալ հաջորդականությամբ.

- որոշվում է մտավոր սեփականության օբյեկտի ակնկալվող օգտակար օգտագործման մնացորդային ժամկետը, այսինքն՝ այն ժամանակահատվածը, որի ընթացքում անհրաժեշտ է զեղչել դրա օգտագործումից կանխատեսվող եկամուտները,

- գնահատվում են ապագա դրամական հոսքերը, որոնք կազմում են մտավոր սեփականության օբյեկտի օգտագործումից զուտ եկամուտը, ինչպես նաև օբյեկտի ամորտիզացիայի մեծությունը,

- որոշվում է դիսկոնտավորման տոկոսադրույքը,

- հաշվարկվում է ապագա եկամուտների հանրագումարային ներկա արժեքը,

- ստացված արդյունքին ավելացվում է մտավոր սեփականության օբյեկտի ընթացիկ ժամանակաշրջանին բերված արժեքը¹⁷:

Մտավոր սեփականության օբյեկտի շուկայական արժեքը հաշվարկվում է որպես այդ ակտիվի մասնաբաժնին վերագրվող դիսկոնտավորված եկամուտների հանրագումարային ներկա արժեք: Նաև հարկ է նշել, որ ապագա դրամական հոսքերի գնահատումը, որն արտացոլում է ընկերության զուտ եկամտի դինամիկան ըստ կանխատեսվող ժամանակաշրջանի, պետք է հիմնված լինի շուկայավարման և ֆինանսական հետազոտությունների վրա¹⁸:

Որպես ամփոփում՝ կարևոր է նաև նշել այն, որ մտավոր սեփականության օբյեկտների փորձաքննություն անցկացնելու համար անհրաժեշտ են նաև գիտելիքներ այն գործունեության բնագավառում, որին պատկանում է վիճահարույց մտավոր սեփականությունը:

Նման փորձաքննությունների անցկացման համար համալիր հետազոտություններում կարող են ներգրավվել տարբեր ոլորտների փորձագետներ, օրինակ՝ փորձագետ գնահատող (ապրանքագետ) և փորձագետ տնտեսագետ: Այսպիսով, վերաբերելի բնագավառների հատուկ գիտելիքների կիրառումը, հատկապես համալիր հետազոտություններում, թույլ կտա ապահովել լիարժեք և բազմակողմանի մտավոր սեփականության օբյեկտի գնահատման փորձաքննության անցկացումը:

¹⁷ Дорофеев А.Ю., Филатов В.В., Медведев В.М., Фадеев А.С., Шестов А.В., Дадугин М.В., Методология оценки нематериальных активов // Интернет-журнал «Науковедение». 2015. Том 7. № 1. <http://dx.doi.org/10.15862/95EVN115/>, էջ 9:

¹⁸ Леонтьев Б.Б., Мамаджанов Х.А. /Принципы и подходы к оценке интеллектуальной собственности и нематериальных активов. Учеб. пособие. М.: Ринфо, 2003. 270 с/, էջ 180:

§ 3. Ապրանքային նշանի արժեքի որոշումը կումուլյատիվ կառուցման մեթոդի միջոցով

Ապրանքային նշանի շուկայական արժեքն առավելապես հարաբերակցվում է ապրանքանիշի (բրենդի) արժեքի կամ կապիտալի հետ, քան որոշակի մակնշված ապրանքի կողմից գեներացված դրամական հոսքերի հետ: Ապրանքային նշանի արժեքի գնահատումը իրականացնելիս ավելի քան համարժեք է համարվում դրա հետ կապված ապրանքանիշի (բրենդի) կյանքի (գործածության) փուլի հաշվառումը¹⁹:

Որոշ հեղինակներ ապրանքային նշանի գնահատման վերաբերյալ պնդում են հետևյալ դրույթը. «Ապրանքային նշանների գնահատումը եկամտային մոտեցմամբ հնարավոր է այն դեպքում, երբ հնարավոր է հուսալիորեն կանխատեսել այն եկամուտները, որոնք կարող են ստացվել ապրանքային նշանների օգտագործումից, և եթե ապրանքային նշանները նախկինում չեն օգտագործվել, ապա այդպիսի ապրանքային նշանների համար հնարավոր եկամտի միակ ձևը դրա օգտագործման իրավունքի վաճառքից ստացված միանվագ եկամուտն է»²⁰:

Բայցևայնպես, ինչպե՞ս վարվել այն իրավիճակում, երբ անհրաժեշտ է գնահատել երկարաժամկետ ժամանակահատվածում (4 և ավել տարիներ) սեփական արտադրանքի թողարկման նպատակով գործածության մեջ գտնվող, սակայն և

¹⁹ Пирогов О. Е., Павлова С. В., Стоимости товарных знаков на основе учета стадий жизненного цикла бренда / Международный научный журнал №6 (81) 2021. DOI: 10.34286/1995-4638-2021-81-6-39-45.

²⁰ Дорофеев А.Ю., Филатов В.В., Медведев В.М., Фадеев А.С., Шестов А.В., Дадугин М.В. Методология оценки нематериальных активов / Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ» Том 7, №1 (2015) <http://naukovedenie.ru/PDF/95EVN115.pdf> (доступ свободный). Загл. с экрана. Яз. рус., англ. DOI: 10.15862/95EVN115.

վերջինիս օգտագործման իրավունքը երբևէ չվաճառված այն ապրանքային նշանի արժեքը, որին որպես ոչ նյութական ակտիվ անհրաժեշտ է ներառել կազմակերպության հաշվեկշռային ակտիվների կազմում:

Ոչ նյութական ակտիվներին կրկին անդրադառնալով՝ հարկ է նշել, որ դրանց հաշվառման պարտադիր սկզբունքներին ու առանձնահատկություններին առնչվող հիմնարար դրույթները սահմանված են միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38-ում, մասնավորապես.

«Կազմակերպությունը պետք է գնահատի ակնկալվող ապագա տնտեսական օգուտների հավանականությունը՝ օգտագործելով խելամիտ և հիմնավորված ենթադրություններ, որոնք արտացոլում են ղեկավարության՝ այն տնտեսական պայմանների ամբողջական կազմի լավագույն գնահատականը, որոնք առկա կլինեն ակտիվի օգտակար ծառայության ընթացքում»²¹:

«Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով ...»: «Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվը պետք է հաշվառվի վերագնահատված գումարով...»: «Ոչ նյութական ակտիվի համար գործող շուկա չի կարող գոյություն ունենալ..., քանի որ այս ակտիվներից յուրաքանչյուրը եզակի է: Բացի այդ, թեև ոչ նյութական ակտիվները գնվում և վաճառվում են, գործարքի պայմանները համաձայնեցվում են առանձին գնորդների և վաճառողների միջև բանակցությունների միջոցով...»: «Վերագնահատումների հաճախականությունը կախված է վերա-

²¹ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38. Ոչ նյութական ակտիվներ, պարագրաֆ 22:

գնահատման ենթարկվող ոչ նյութական ակտիվների իրական արժեքների փոփոխականությունից»: «Եթե վերագնահատվող ոչ նյութական ակտիվների դասում ընդգրկված ոչ նյութական ակտիվը չի կարող վերագնահատվել, քանի որ այդ ակտիվի համար գործող շուկա գոյություն չունի, ապա նշված ակտիվը պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով...»²²:

Պետք է նկատել, որ ոչ նյութական ակտիվի ճանաչման և գնահատման վերոնշյալ սկզբունքները թույլ են տալիս հաշվի առնել վերջինիս սկզբնական, նաև հետագայում՝ վերագնահատման արժեքների որոշման նպատակով ճիշտ ընտրված մեթոդաբանության կարևորությունը:

Հաջորդիվ հարկ է ներկայացնել որոշ մեթոդների և մոտեցումների կիրառության հիմունքներ, որոնց օգնությամբ հնարավոր է որոշել ոչ նյութական ակտիվի արժեքը, և մասնավորապես՝ դրանք կիրառել բարդ ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների անցկացման ընթացքում:

Ինչպես նշվեց, մտավոր սեփականության օբյեկտի արժեքը ռոյալթիից ազատման մեթոդի օգնությամբ հաշվարկելու դեպքում առաջարկվում է կիրառել դրամական հոսքերի զեղչման մեթոդը, որում դիսկոնտավորման դրույքը (r -ը՝ ներդրումների ընդունելի նվազագույն եկամտաբերությունը), մասնավորապես, կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) մոդելով գնահատելիս՝ ընկերության կապիտալի միջին կշռված արժեքը ցույց կտա այն եկամտի նորման, որը պետք է վճարել ներդրումային կապիտալի (սեփական և/կամ փոխառու) օգտագործման դիմաց՝ ներդրումների ապագա եկամտաբերությունը գնահատելու համար՝ հաշվի առնելով ներդրումային կապիտալի եկամտաբերության

²² Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտ (ՀՀՄՍ) 38. Ոչ նյութական ակտիվներ, պարագրաֆ 74-82:

նախնական պայմանները: WACC-ի հաշվարկման հայտնի բանաձևն է²³.

$$WACC = k_d \times (1 - T) \times \frac{D}{D + E} + k_e \times \frac{E}{D + E}, \quad (2)$$

որտեղ՝

E - սեփական կապիտալի մեծություն,

D - փոխառու միջոցների մեծություն,

T - շահութահարկի դրույքաչափ (%),

kd - փոխառու միջոցների արժեք (%),

ke - սեփական կապիտալի շահութաբերությունը ROE (զուտ շահույթ ÷ սեփ.կապ × 100):

Պայմանականորեն ընդունենք, որ WACC մոդելի կիրառմամբ դիսկոնտավորման տոկոսադրույքի հաշվարկման արդյունքում ներդրումների նվազագույն եկամտաբերությունը ստացվել է բացասական արժեք, ինչը, բնականաբար, անհնար է հետագա հաշվարկներում կիրառության նպատակով՝ պայմանավորված ընկերության սեփական և փոխառու կապիտալների հարաբերակցությամբ որոշվող ընդհանուր կապիտալի ոչ օպտիմալ կառուցվածքի, վճարունակության, ինչպես նաև շահութաբերության «ոչ համադրելի» ցուցանիշների հետ: Տեսականորեն՝ ոչ նյութական ակտիվների գնահատման նպատակով դիսկոնտավորման տոկոսադրույքի WACC մոդելի կիրառմամբ որոշումն առավել արդյունավետ է ընկերության

²³ Мамиконян К.О. Подходы оценки рыночной стоимости компании методом дисконтирования будущих денежных потоков при проведении финансово-экономических экспертиз: / Проблемы и вопросы современной науки. «Тенденции развития науки и образования» Декабрь 2018 г. №1(1), Часть 4 Изд. DOI: 10.18411/pivsn-58.

ընդհանուր կապիտալի՝ 75% սեփականի և 25% փոխառուի օպտիմալ կառուցվածքի դեպքում²⁴:

Այսուհանդերձ, որոշակի առկա ռիսկային գործոնների ազդեցությունը ընկերության տնտեսական գործունեության վրա հաշվի առնելու նպատակով դիսկոնտավորման տոկոսադրույքի որոշման համար պետք է կիրառել *կումուլյատիվ կառուցման* մոդելը:

Կումուլյատիվ (կուտակային, միագումարային) կառուցման մոդելը գեղջման (դիսկոնտավորման) տոկոսադրույքի որոշման մեթոդներից է, որը նպատակահարմար է օգտագործել մտավոր սեփականության յուրաքանչյուր առանձին օբյեկտի արժեքը որոշելու համար, քանի որ այն թույլ է տալիս հաշվի առնել եզակի ՄՍՕ-ի առանձնահատկությունները՝ գնահատելով միայն այն ռիսկերը, որոնք իրականում նշանակալից են:

Կումուլյատիվ կառուցման մոդելը բաղկացած է ոչ ռիսկային տոկոսադրույքի և պայմանականորեն նորմավորված բաղադրիչների հաջորդական ավելացումից, որոնք այս կամ այն կերպ արտացոլում են կազմակերպության գնահատվող մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը: Քննարկվող մոդելը ներառում է հետևյալ բաղադրիչները. սկզբնական փուլում դիսկոնտավորման տոկոսադրույքը կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկելու համար ենթադրվում է հաշվի առնել ընտրանքային ռիսկի գործոններ, որոնց արժեքը պայմանականորեն վերցվում է 0-ից 5-ի սահմաններում տոկոսային արժեք²⁵: Ի դեպ, կապիտալի

²⁴ Джеймс Р. Хнтчер, Оценка стоимости нематериальных активов / Под научн. ред. В.М. Рутгайзера. — М.: Маросейка, 2008. — 144 с. — (Серия «Финансовое оценивание. Области применения и модели»), , 57-58.

²⁵ Бричка Е.И., Методы определения ставки дисконтирования в оценке стоимости интеллектуальной собственности венчурного предприятия. / Финансовая аналитика: проблемы и решения, 28 (214) – 2014.

ակտիվների գնահատման մոդելը (CAPM) և կումուլյատիվ կառուցման մոդելը հիմնված են այն իրողության վրա, որ ներդրողը պատրաստ է ռիսկի դիմել միայն այն դեպքում, եթե իրականության մեջ ոչ ռիսկային ներդրումների համեմատ իրական ռիսկի պարագայում լրացուցիչ օգուտ է խոստացվում: Զեդչման (դիսկոնտավորման) տոկոսադրույքը (դրույքը, գործակիցը) ներկայացնում է եկամտաբերության այն մակարդակը, որի դեպքում ներդրողը կհամաձայնի ընկերության կանոնադրական կապիտալում ներդրումներ կատարելու որոշում կայացնել²⁶: Ըստ այդմ, **որքան բարձր է այդ ընկերությունում ներդրումներ կատարելու հետ կապված ռիսկի մակարդակը, այնքան ներդրողն իրավունք ունի պահանջել ավելի բարձր եկամտաբերության նորմա՝ այլ հավասար պայմանների դեպքում:**

Այսպիսով, կումուլյատիվ կառուցման մոդելը հիմնված է եկամտաբերության ոչ ռիսկային տոկոսադրույքի (նորմայի) և ներդրումներ կատարելու համար ռիսկի պարզևավճարների միագումարման վրա: Մեթոդը լավագույնս կարող է հաշվի առնել ներդրումային բոլոր հնարավոր և ընտրանքային ռիսկերը, որոնք կապված են թե՛ արդյունաբերության, թե՛ տնտեսության ընդհանուր բնույթի գործոնների, և թե՛ կազմակերպության առանձնահատկությունների հետ:

Այս փուլում հաշվարկվում է ընկերության տնտեսական գործունեության արդյունքում տվյալ ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի իրացումից ստացված հասույթի հավելածի միջին թվաբանականը՝ նախորդող 4 տարիների կտրվածքով: Ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի

²⁶ Чихирников А.М., Определение ставки дисконтирования методом кумулятивного построения / Азимут научных исследований: экономика и управление, 2015. № 3 (12).

իրացումից հասույթի վերաբերյալ կանխատեսում կատարելու նպատակով համապատասխան հաշվարկային ցուցանիշների ստացումն ամփոփ կերպով ներկայացվում է ստորև բերված աղյուսակում:

Աղյուսակ 1

Ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի վերաբերյալ ցուցանիշները					Մեկ տարվա միջին թվաբանական	Հավել- աճի միջին թվաբանական
Ցուցանիշներ	Տարի 1	Տարի 2	Տարի 3	Տարի 4		
1	Ընդհանուր իրացված արտադրանքը					
2	Ապրանքային նշանի օգտագործմամբ արտադրանքի մասնաբաժինը (%)					
3	Ապրանքային նշանի օգտագործմամբ իրացված արտադրանքի քանակի և միավորի վաճառքի գնի արտադրյալ կամ՝ իրացումից հասույթ (V/C)					
4	Ապրանքային նշանի օգտագործմամբ իրացված արտադրանքի ինքնարժեքը					
5	EBITD (Գործառնական շահույթ կամ զուտ եկամուտ) = Ընդամենը վաճառքից եկամուտ - Ծախս					
6	Մարքեթինգային ծախսեր					
7	Ֆինանսական ծախսեր և Շահույթահարկ					
8	Զուտ շահույթ = (EBITD - Ֆինանսական և մարքեթինգային ծախսերը - Շահույթահարկ (համամասնորեն))					

Հարկ է նշել, որ **հավելաճը՝ յուրաքանչյուր տարվա ցուցանիշի տարբերությունն է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշից, այն ենթադրում է, թե յուրաքանչյուր հաջորդ տարի ապրանքային նշանի համբավը կամ վարկանիշը որքան հավելյալ շահույթ է գեներացրել այդ ապրանքանիշը կրող կոնկրետ ապրաքատեսակների համար:** Նույն տրամաբանությամբ դուրս է բերվել իրացված արտադրանքի ինքնարժեքի հավելաճն՝ ըստ տարիների: Ստացված «Գործառնական շահույթ կամ զուտ եկամուտ» ցուցանիշից նվազեցվում են մարքեթինգային և ֆինանսական ծախսերի, նաև շահութահարկի գծով էական ծախսի միջին թվաբանական ցուցանիշները՝ արդյունքում ստանալով զուտ շահույթի «Հավելաճի միջին թվաբանական» ցուցանիշը (տե՛ս աղյուսակ 1-ի 5-րդ տողի «Հավելաճի միջին թվաբանական» սյունակ):

Տվյալ պարագայում, երբ ապրանքային նշանը որպես ոչ նյութական ակտիվ անհրաժեշտ է ներառել կազմակերպության հաշվեկշռային ակտիվների կազմում, անհրաժեշտ է հրաժարվել ռոյալթիի չափը որոշելիս ընդունված իրացումից հասույթի նկատմամբ ըստ ոլորտների «25-33 տոկոս կանոնի» կիրառությունից, քանի որ այդ կանոնը լիարժեքորեն չի արտահայտում կազմակերպության գործունեության արդյունքում ստացված գործառնական մարժայի մակարդակը: Իսկ իրականում, նշված ցուցանիշը, որը պետք է յուրաքանչյուր տարի վերահաշվարկվի, սկզբունքայնորեն պետք է հանդիսանա ռոյալթիի չափի որոշման հիմք:

Այսպիսով, ստացված հավելվածի միջին թվաբանական «Ձուտ շահույթ» ցուցանիշը հարաբերելով մեկ տարվա միջին թվաբանական «Իրացումից հասույթի» ցուցանիշին՝ տոկոսային առումով դուրս է բերվում «Գործառնական մարժայի կամ ռոյալթիի» չափը (աղյուսակ 1-ի 9-րդ տողի «Հավելվածի միջին թվաբանական» սյունակ):

Տեսականորեն՝ հավելվածի միջին թվաբանականը բացասական ցուցանիշ ընդունելու պարագայում կնախանջի, որ հաջորդ տարվա եկամուտների կանխատեսման առումով ապրանքային նշանի համբավը կամ վարկանիշը միջին մակարդակում Օ-ական տնտեսական էֆեկտ է ապահովել (այսինքն՝ վերջին տարում նվազագույնը կարող է կրկնվել նախնական (առաջին տարվա) իրացումից հասույթի ցուցանիշը, որի դեպքում հավելվածի միջին թվաբանականը կազմում է 0):

Այժմ ընդունենք, որ զուտ շահույթի գծով հավելվածի միջին թվաբանական ցուցանիշի ստացման ռիսկի ցուցանիշը տարեկան միջին թվաբանականի նկատմամբ կազմում է $Y\%$: Այդուհանդերձ, հաջորդ փուլում կառուցվելու է ռիսկային պարզևավճարի բաշխվածության հաշվարկավերլուծական համակարգ՝ առավելագույնը Y տոկոսային կետով, որը ցույց կտա, թե այդ համակարգում քանի տոկոս կկազմի ռիսկի մակարդակը՝ զուտ շահույթի գծով հավելվածի միջին թվաբանական ցուցանիշն ապահովելու առումով:

Հաշվի առնելով վերոգրյալը, անհրաժեշտ է կատարել ռիսկային գործոնների սահմանում և դրանց նորմավորում՝ համապատասխան հաշվարկավերլուծական եղանակների միջոցով: Հարկ է նշել, որ ռիսկային գործոնների ցանկում կարող են ներառվել են նաև տվյալ ընկերության կողմից սահմանված և իրենց իսկ կողմից նորմավորված ռիսկային գործոններ, որոնք ևս

հաշվի են առնվում դիսկոնտավորման (զեղչման) դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելով որոշման ժամանակ: Մեխանիզմի գործողությունը ներկայացված է ստորև՝ աղյուսակի միջոցով:

Աղյուսակ 2

Դիսկոնտավորման դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելի հաշվարկը՝ եկամտաբերության ոչ ռիսկային նորմայի և առավելագույնը Y% ռիսկային պարզևավճարի բաշխվածությամբ

<p><i>Եկամտաբերության ոչ ռիսկային նորմա՝ պեղական պարպարմաների միջին եկամտաբերությունը կամ խոշոր բանկերի կողմից առաջարկվող ավանդների երկարաժամկետ միջին եկամտաբերությունը:</i></p>	<p><i>Միջին տոկոսադրույք՝ ՀՀ գանձապետական պարպարմաների եկամտաբերություն և ՀՀ խոշորագույն բանկերի կողմից առաջարկվող ավանդների եկամտաբերություն:</i></p>
<p>Ռիսկային գործոնները <i>(առավելագույն ընդհանուր հավելվածարժեքների արժեքը Y տոկոսային կետ)</i></p>	<p>Ռիսկային պարզևավճարը և ռիսկային գործոնների նկարագրությունը <i>(փաստացի տոկոսադրույքի և ոչ ռիսկային տոկոսադրույքի (նորմայի) տարբերությունը դա ռիսկի պարզևավորումն է)</i></p>
<p>Ընկերության տարածաշրջանային ընդլայնումն ըստ դասակարգման (ՓՄՁ, խոշոր) (տոկոսի միջակայք)</p>	
<p>Ֆինանսական կառուցվածքը (տոկոսի միջակայք)</p>	
<p>Արդյունաբերական և տարածքային դիվերսիֆիկացիան (տոկոսի միջակայք)</p>	
<p>Հաճախորդների դիվերսիֆիկացիան (տոկոսի միջակայք)</p>	
<p>Կազմակերպության շահութաբերությունը և եկամուտների կանխատեսելիությունը (տոկոսի միջակայք)</p>	
<p>Արտադրական և առևտրային ռիսկ (տոկոսի միջակայք)</p>	
<p>Նյութական վնասների և կորուստների ռիսկ (տոկոսի միջակայք)</p>	

Պարտքերի (չվճարումների) հավաքագրելիության և վճարումների ժամկետների խախտումների ռիսկ (տոկոսի միջակայք)	
Գնաճը (տոկոսի միջակայք)	
Ֆինանսական կայունության ռիսկ (տոկոսի միջակայք)	

Դիսկոնտավորման դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկի աղյուսակում «Ֆինանսական կայունության» գործոնի ռիսկային պարզևավճարը առաջարկվում է հաշվարկվել է հետևյալ կերպ.

Աղյուսակ 3

Ֆինանսական կայունության որոշման նպատակով ընտրված ցուցանիշների անվանումը	Ցուցանիշների սահմանային մակարդակը	202-թ.-ի համար ստացված գործակիցները	Բնութագրում
<i>1</i>	<i>2</i>	<i>3</i>	<i>4</i>
1. Ֆինանսական անկախության (ինքնուրույնության, համակենտրոնացման) գործակից. Գ(1) = սեփական կապիտալ / ակտիվների (հաշվեկշռի) հանրագումար			Ցույց է տալիս, թե կազմակերպության ընդհանուր միջոցների որ մասն է ձևավորվել սեփական կապիտալի հաշվին: Գործակցի ցածր արժեքը վկայում է այն մասին, որ կազմակերպությունն իր գործունեությունը հիմնականում ֆինանսավորում է երկարաժամկետ և կարճաժամկետ կրեդիտորական պարտքերի հաշվին:
2. Կապիտալի լներեջը. Գ(2) = փոխառու կապիտալ / սեփական կապիտալ			Պարտավորությունների և սեփական կապիտալի հարաբերակցությունը ցույց է տալիս, թե սեփական կապիտալի միավորի հաշվով որքան պարտավորություններ ունի կազմակերպությունը: Շատ ցածր արժեքի դեպքում պետք է զգուշանալ փոխառու կապիտալի ներգրավման հար-

			ցում, իսկ շատ բարձր արժեքի դեպքում՝ առկա է փոխառու կապիտալից (վարկատուներից) կափավածության չափազանց մեծ ռիսկ:
3. Ընդհանուր իրացվելիության գործակից. Գ(3) = ընթացիկ ակտիվներ / ընթացիկ պարտավորություններ			Ցույց է տալիս կազմակերպության ընթացիկ պարտավորությունների՝ ընթացիկ ակտիվներով ապահովվածության աստիճանը:
4. Ակտիվների շահութաբերության գործակից. Գ(4) = զուտ շահույթ / ընդհանուր ակտիվներ			Ցույց է տալիս միավոր ակտիվների հաշվով շահույթի մեծությունը:
5. Իրացման շահութաբերության գործակից. Գ(5) = զուտ շահույթ / իրացումից հասույթ			Ցույց է տալիս իրացումից հասույթի միավորի հաշվով ստացված շահույթի մեծությունը:
ԸՆԴԱՄԵՆԸ			Այն ֆինանսական գործակիցները, որոնք ունենում են սահմանային արժեքից բարձր կամ ցածր գործակիցներ, ստացված «բալի» փոխարեն հարկ է վերցնել տվյալ գործակցի սահմանային արժեքը:

Դիսկոնտավորման դրույքի կումուլյատիվ կառուցման մոդելով հաշվարկի աղյուսակում «Ֆինանսական կայունության ռիսկ» գործոնի չափորոշիչները հետևյալն են.

Աղյուսակ 6

Ֆինանսական կայունության չափորոշիչները	Ստացված տոկոսադրույքի հաշվարկ	Ռիսկի գործոնը (բալեր)
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես կայուն, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 80-99 տոկոսը:		1

Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես հարաբերական կայուն, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 60-79 տոկոսը:		2
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես ահազանգող կայուն, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 40-59 տոկոսը:		3
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես անկայուն, և առկա են անվճարունակության հատկանիշներ, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի 20-39 տոկոսը:		4
Կազմակերպությունը համարվում է ֆինանսապես կրիտիկական անկայուն և անվճարունակ, երբ հավաքում է առավելագույն գումարային գնահատականի մինչև 20 տոկոսը:		5

Ինչ վերաբերում է դիսկոնտավորման տոկոսադրույքին, ապա, ինչպես հայտնի է, վերջինիս հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$r = r_f + \sum_{i=1}^n R_i \quad (3)$$

որտեղ՝

r - դիսկոնտավորման տոկոսադրույքն է,

r_f - ոչ ռիսկային դրույքը (եկամտաբերության նորման),

n - ռիսկային գործոնների քանակը,

R_i - ռիսկային պարզևավճարը:

Հաշվի առնելով ստացված դիսկոնտավորման տոկոսադրույքը, ռոյալթիի չափը և հիմք ընդունելով կատարված վերլուծությունների արդյունքները՝ մտավոր սեփականության օբյեկտի (ապրանքային նշանի) արժեքը կարելի է հաշվարկել՝ կիրառելով ռոյալթիից ազատման մեթոդը՝ կանխատեսվող դրամական հոսքերի զեղչումը:

Այսպիսով, ապրանքային նշանի արժեքը որոշելու համար անհրաժեշտ է՝ կանխատեսվող ժամանակաշրջանի համար «Ապրանքային նշանի օգտագործմամբ իրացված արտադրանքի քանակի և միավորի վաճառքի գնի արտադրյալը (*ViCi*)», ինչը հավասար էր մեկ տարվա միջին թվաբանականի և հավելաճի միջին թվաբանականի գումարին (տե՛ս աղյուսակ 1-ի 3-րդ տող), բազմապատկել ստացված ռոյալթիի չափով և գեղչել՝ բերելով ներկա արժեքի (երբ $N=1, i=1$): Ստացված արժեքները տեղադրելով ապրանքային նշանի արժեքի որոշման վերը ներկայացված բանաձև 1-ում՝ **1 տարի կանխատեսվող ժամանակահատվածի համար կստացվի ապրանքային նշանի արժեքը:**

Ապրանքային նշանի արժեքի որոշման նպատակով կառուցված հաշվարկավերլուծական համակարգում ռոյալթիի չափը կարելի է ստանալ գործառնական մարժայի արժեքից՝ «Զուտ շահույթ» ցուցանիշի նախորդ տարիների արժեքների հավելաճի միջին թվաբանականը հարաբերելով «Իրացումից հասույթ» ցուցանիշի նախորդ տարիների արժեքների միջին թվաբանականին: Ինչ վերաբերում է դիսկոնտավորման տոկոսադրույքին, ապա այն կարելի է որոշել կումուլյատիվ կառուցման մոդելի՝ ոչ ռիսկային նորմայի և նորմավորված ռիսկային գործոնների պարզևավճարների միագումարով՝ ձևավորելով նախապես ընտրված առավելագույն տոկոսային կետով ռիսկային պարզևավճարի բաշխվածության նոր հաշվարկավերլուծական համակարգ, որի նպատակն է՝ ցույց տալ, թե այդ համակարգում որքան կկազմի ռիսկի մակարդակը՝ զուտ շահույթի գծով «Հավելաճի միջին թվաբանական» ցուցանիշն ապահովելու առումով:

§ 4. Համակարգչային ծրագրի արժեքի որոշման մոտեցումները

Համակարգչային ծրագրերը պատկանում են ոչ նյութական ակտիվների դասին, որոնք, ներկայանալով որպես ֆիզիկապես գոյություն չունեցող ռեսուրս և չունենալով շոշափելի ձև, զգալիորեն նպաստում են ընկերության արժեքին՝ ընդգրկելով ծրագրային ապահովման արտադրանքների և տեխնոլոգիաների լայն շրջանակ:

Համաձայն ՀՀ կառավարության 24.08.2022թ.-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված Գնահատման ընդհանուր ստանդարտի 8-րդ կետի. *«Ոչ նյութական ակտիվները չեն պատկանում անշարժ գույք համարվող ակտիվների շարքին, սակայն ոչ նյութական ակտիվները կարող են փոխկապակցված լինել անշարժ գույքի հետ և էական ազդեցություն ունենալ արժեքի վրա»²⁷:*

Ինչպես հայտնի է, ընկերություններից պահանջվում է իր ֆինանսական հաշվետվություններում բացահայտել ոչ նյութական ակտիվների ձեռքբերման, վերագինման և ամորտիզացիայի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն: Այս նպատակով օգտագործվում են նաև քանակական և որակական գնահատման տեխնիկական համադրություններ՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են եկամուտների կանխատեսումները և զեղչման տոկոսադրույքները:

Համակարգչային ծրագրերի գնահատումը եզակի մարտահրավերներ է ներկայացնում թվային լանդշաֆտի դինամիկ

²⁷ՀՀ կառավարության 24.08.2022թ.-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված Գնահատման ընդհանուր ստանդարտ:

բնույթին՝ պայմանավորված տեխնոլոգիական առաջընթացով: Ապագա տնտեսական օգուտների ճշգրիտ կանխատեսումը դժվար է, հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են շուկայի պահանջարկը, մրցակցային ճնշումը և տեխնոլոգիապես հնացումը:

Որոշ ոչ նյութական ակտիվներ կարող են պարունակվել ֆիզիկական սուբստանցիայի մեջ: Կազմակերպությունը պետք է դատողություններ անի՝ գնահատելու համար, թե որ տարրն է առավել նշանակալի: Օրինակ՝ համակարգչով կառավարվող հաստոցի համար նախատեսված համակարգչային ծրագիրը, առանց որի այդ հաստոցը չի կարող աշխատել, կազմում է հաստոցի անբաժանելի մասը և դիտարկվում է որպես հիմնական միջոց: Նույն մոտեցումը կիրառվում է համակարգչի օպերացիոն համակարգի համար: Երբ ծրագիրը համակարգչի անբաժանելի մաս չի կազմում, ապա այս դեպքում համակարգչային ծրագիրը դիտարկվում է որպես ոչ նյութական ակտիվ²⁸:

Համակարգչային ծրագրի գնահատումն անհրաժեշտ է, երբ կազմակերպությունում իրականացվում են հետևյալ գործընթացներից որևէ մեկը.

- կազմակերպության հիմնադրման կամ մասնակցության ժամանակ համակարգչային ծրագրի արժեքի չափով ներդրում կազմակերպության կանոնադրական կապիտալ՝ բաժնեմասերի կամ բաժնետոմսերի ձեռքբերման նպատակով,
- ստեղծված կամ ձեռքբերված համակարգչային ծրագրի արժեքի ներմուծում կազմակերպության հաշվեկշիռ,

²⁸ «Ոչ նյութական ակտիվներ» Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (ՖՀՄՍ) 38, կետ 4:

– համակարգչային ծրագրի սեփականատեր կազմակերպության ոչ նյութական ակտիվների վերագնահատում,

– համակարգչային ծրագիր ունեցող կազմակերպության ընդհանուր շուկայական արժեքի որոշում,

– համակարգչային ծրագրի հեղինակների վարձատրության որոշում,

– լիցենզային պայմանագրի գնի որոշում, որի առարկան համակարգչային ծրագիրն է,

– համակարգչային ծրագրի սեփականատիրոջ բացառիկ իրավունքների խախտմամբ պատճառված վնասի չափի որոշում,

– համակարգչային ծրագրերի ապահովագրություն,

– համակարգչային ծրագրի սեփականատեր կազմակերպության վերակազմակերպում,

– բիզնես պլանի մշակման շրջանակներում համակարգչային ծրագրի օգտագործմամբ տնտեսական արդյունավետության որոշում,

– համակարգչային ծրագրերի նկատմամբ սեփականության իրավունքի իրացման հետ կապված այլ գործառնություններ²⁹:

Ոչ նյութական ակտիվների արժեքի ճշգրիտ հաշվարկը բարդ գործընթաց է, որը բացատրվում է գնահատման օբյեկտի բացառիկությամբ և յուրաքանչյուր բիզնեսում դրա կիրառման յուրահատկությամբ: Օրինակ, նույն ակտիվները՝ արդյունաբերական նմուշը, հայտնագործությունը, տեղեկատվական տեխնոլոգիան կամ համակարգչային ծրագիրը, որոնք օգտագործվում են տարբեր ընկերություններում, իրենց սեփականատիրոջը տարբեր եկամուտներ կարող են ապահովել:

²⁹ URL: <https://zuykov.com/about/articles/otsenka-nematerialnikh-aktivov-chto-eto-takoe-i-dlya-chego-eto-nuzhno/>.

Համակարգչային ծրագրի արժեքի որոշման համար նախ անհրաժեշտ է ունենալ հետևյալ տեղեկատվությունը.

– համակարգչային ծրագրի օգտագործման նպատակը, կիրառման վերաբերյալ գրանցված փաստաթղթերը,

– օգտագործման լիցենզային պայմանագիրը,

– համակարգչային ծրագրի նկարագրությունը՝ ծավալը, ծրագրավորման լեզուն, հարթակը, մասշտաբայնությունը (օգտատերերի քանակը),

– համակարգչային ծրագրի կիրառմամբ արտադրանքի հիմնական պլանային ցուցանիշները,

– համակարգչային ծրագրի օգտագործման ժամանակահատվածի համար պլանավորվող համախառն եկամուտը, ձեռնարկատիրական գործունեության գծով վճարվող հարկերը,

– մնացորդային հաշվեկշռային արժեքը, և այլն:

Իրականում տեղեկատվական տեխնոլոգիաների արդյունավետությունը և դրանց ներդրման արդյունքները գնահատելն ակնհայտ դժվարություններ է ներկայացնում: Վերջիններս գնահատելիս սխալները նվազագույնի հասցնելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել կազմակերպության գործունեության, գնահատման առարկայի և շուկայի մանրակրկիտ և խորը վերլուծություն:

Ինչ վերաբերում է գնահատման հայտնի մոտեցումներից որևէ մեկի կիրառման նպատակահարմարությանը, ապա պետք է նշել, որ նշվածը հիմնականում կախված է գնահատողին հասանելի տեղեկատվության առկայությունից, ինչպես նաև նրա առջև դրված խնդիրների բնույթից:

Շուկայական մոտեցումը ներառում է շուկայում նմանատիպ ծրագրերի համեմատություն՝ համադրելի վաճառքի կամ լիցենզավորման համաձայնագրերի հիման վրա գնահատում ստա-

նալու համար: Սակայն շուկայական և համեմատական մոտեցումները գործնականում ներկայումս չեն կիրառվում, քանի որ նմանատիպ տեխնոլոգիական ընկերությունների արժեքը կարող է տասնյակ անգամ տարբերվել: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ ոչ նյութական ակտիվների տեսակավորված շուկաներ ՀՀ-ում դեռևս չեն ձևավորվել:

Ծախսային մոտեցմամբ գնահատվում է ծրագրի ստեղծման, մշակման կամ ձեռքբերման հետ կապված ծախսերը, ներառյալ՝ հետազոտությունների և զարգացման հետ կապված ծախսերը:

Սովորաբար, տեղեկատվական տեխնոլոգիայի արդյունավետությունը գնահատելիս հաշվի են առնվում հետևյալ ծախսերը.

1. Ծրագրային ծախսեր. համակարգչային սարքավորումներ և ծրագրային ապահովում, սերվերի ապարատային և ծրագրային ապահովում, ցանցային սարքավորումներ և ծրագրակազմ, տեղադրում, ինտեգրում, կապալառուների ծառայությունների վճարում, երաշխիքի և սպասարկման ծախսեր, լիցենզիա, անցումային գործընթացների և ռիսկերի նվազեցման ծախսեր:

2. Գործառնական. էլեկտրաէներգիայի վրա ծախսվող ռեսուրսներ (սարքավորումներ, պահեստային հզորություն, օդորակիչ), համակարգի ենթակառուցվածք, սովորական սպասարկում, անվտանգություն, համակարգի հասանելիության և կատարողականի բարձրացում, համակարգի վերականգնման և կրկնօրինակման ծախսեր, արտաքին և ներքին աուդիտ, անսարքությունների վերացում, օգտագործողների և մասնագետների վերապատրաստում, սարքավորումների փոխարինում, մասշտաբավորում և արդիականացում, խորհրդատվական ծառայություններ, համակարգի ապամոնիտաժում և այլն:

3. Այլ ծախսեր. մարքեթինգային հետազոտությունների, անբարեխիղճ մրցակցության հաղթահարման և այլ ծախսեր³⁰:

Եկամտային մոտեցումը հիմնված է այն սկզբունքի վրա, որ ակտիվի արժեքը կախված է նրա եկամուտ ստեղծելու կարողությունից: Այս մոտեցումը գնահատում է համակարգչային ծրագրի կողմից առաջացած ապագա տնտեսական օգուտները՝ եկամուտների կանխատեսման միջոցով:

Ընդհանուր առմամբ, հաճախորդների բազայի որակը, քանակը, բնութագրերը, հետագա համագործակցության հնարավորությունները, վճարումների հուսալիությունը և կայունությունը կարևոր ցուցանիշներ են համակարգչային ծրագրի սեփականատեր համարվող տեխնոլոգիական ընկերության ապագա եկամուտները պլանավորելու համար: Ֆրանչայզերի դեպքում ցույց է տրվում, որ նույնիսկ առանց շահույթի ընկերությունը կարող է արժեք ունենալ տարբեր առավելությունների շնորհիվ, դրանք են, օրինակ՝ հավատարիմ հաճախորդների շրջանակը, ոլորտին հատուկ տրված լուծումները, շրջանառության կտրուկ աճը, շուկայի հատվածի տպավորիչ մասի տիրապետումը և այլն:

Համակարգչային ծրագրի շուկայական արժեքի որոշման մեթոդաբանության ընտրության դեպքում պետք է դիտարկել, ըստ ամենայնի, եկամտային մոտեցման շրջանակներում կիրառվող «ինքնարժեքում շահում» (profit in cost) մեթոդը, որի կիրառման պարագայում մտավոր սեփականության օբյեկտը թույլ է տալիս տնտեսել և շահել արտադրական կամ վարչական ծախսերի գծով:

«Ինքնարժեքում շահում» մեթոդը կարող է որոշ իրադրություններում կիրառվել նաև ծախսային մոտեցման

³⁰ URL: <https://habr.com/ru/articles/713998/>.

շրջանակներում: Սա գնահատման մեթոդ է, որը թույլ է տալիս գնահատել ընկերության ստացված եկամտի աճը՝ ոչ նյութական ակտիվների օգտագործման հաշվին³¹: «Ինքնարժեքում շահում» մեթոդն օգտագործվում է հիմնականում արդյունաբերական սեփականության, ծառայությունների ոլորտի, նոու-հաուի և ծրագրային ապահովման արտադրանքի արժեքի որոշման նպատակով: Այս մեթոդի էությունը կայանում է նրանում, որ մտավոր սեփականության օբյեկտի օգտագործումից տնտեսումը (եկամուտը) իրենից ներկայացնում է վաճառքի ենթակա ապրանքների կամ մատուցվող ծառայությունների ինքնարժեքում շահում, այսինքն՝ ինքնարժեքի նվազեցում³²: Մտավոր սեփականության արժեքը սահմանվում է որպես դրա օգտագործման արդյունքում արտադրության, վերավաճառքի, աշխատանքների կատարման ընթացքում առաջացող ծախսերի խնայողություն: Ինքնարժեքում շահումը արձանագրվում է այն ժամանակ, երբ մտավոր սեփականության օբյեկտը բերում է օգտավետ էֆեկտ, այսինքն՝ ինքնարժեքում ամփոփված ծախսերն ավելի քիչ են հաշվարկվում: «Ինքնարժեքում շահում» մեթոդով որոշվում է, որպես կանոն, համեմատական կամ նմանատիպ ապրանքների արտադրության կամ վաճառքի, ինչպես նաև ծառայությունների մատուցման նպատակով կատարվող աշխատանքների՝ դրանց նախկինում առանց մտավոր սեփականության օբյեկտի օգտագործման կատարված հաշվարկային ծախսերի համեմատությամբ տնտեսման (եկամտի) չափը:

³¹ Петрикова Е.М. и другие, Методы оценки стоимости нематериальных активов, /Проблемы. мнения. Решения, 2 (282) – 2015/.

³² Азгальдов Г.Г., Карпова Н. Н. Оценка стоимости интеллектуальной собственности и нематериальных активов. М.: Международная академия оценки и консалтинга, 2006. 398 С., էջ 84-85:

«Ինքնարժեքում շահում» մեթոդի համար էական են հետևյալ ծախսային հոդվածների հետ կատարվող ֆինանսական հաշվարկները և դրանց հիման վրա իրականացվող վերլուծությունները.

- ՄՍՕ-ի օգտագործման դեպքում նյութերի տնտեսման հաշվարկ,

- ՄՍՕ-ի օգտագործման դեպքում աշխատուժի ծախսերի տնտեսման հաշվարկ,

- ոչ արտադրական ծախսերի տնտեսման հաշվարկ,

- ընդհանուր ինքնարժեքում շահումի հաշվարկ,

- ինքնարժեքում շահումից ստացվող ապագա եկամտի հոսքի ներկա արժեքի բերման հաշվարկ՝ զեղչման դրույքի միջոցով, կախված այն բանից, թե ենթադրվում է արդյոք, որ այս եկամուտները հաստատուն են, կամ եթե դրանք փոփոխուն են, ապա ժամանակի ընթացքում ի՞նչ միջինացված ցուցանիշներ են արձանագրվում:

Ակտիվ շուկայում, որտեղ գները որոշվում են առաջարկի և պահանջարկի հիման վրա, գործարքներն իրականացվում են բավականին հաճախ՝ առանց հարկադրանքի, իսկ ներգրավված կողմերը՝ կախված չեն միմյանցից: Ելնելով ոչ նյութական ակտիվների յուրահատկությունից՝ պետք է ընդունել, որ գործնականում դրանց համար չկա ակտիվ շուկա: Այդուհանդերձ, իրական արժեքի ցուցիչներից մեկը կարող է համարվել կանխատեսվող եկամուտների զեղչված արժեքը:

Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի ներկա արժեքն առաջարկվում է հաշվարկվել հետևյալ զեղչման (դիսկոնտավորման) բանաձևի օգնությամբ.

$$PV = \sum_{t=1}^T \frac{\Delta n_t}{(1+r)^t}, \quad (1)$$

որտեղ՝

PV - ՄՍՕ-ի ներկա (զեղչված) արժեքն է,

T - ծրագրի օգտակար օգտագործման ժամանակահատվածը,

Δn_t - ծրագրի օգտագործման արդյունքում ինքնարժեքում

շահումի չափը t ժամանակահատվածում,

r - դիսկոնտավորման տոկոսադրույքը³³:

Ինչ վերաբերում է ոչ նյութական ակտիվների գնահատման դեպքում դիսկոնտավորման դրույքի ոչ ստանդարտ հաշվարկների իրականացմանը, ապա, ինչպես նշվել է, այս նպատակով առաջարկվել է կիրառել կումուլյատիվ կառուցման մոդելը, որում հաշվարկների իրականացման համար հաշվի են առնվում ընտրանքային ռիսկերի գործոններ:

Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի արժեքի որոշման փորձագիտական հետազոտության ընթացքում կարևորվում է հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի **փորձագետի** կամ **մասնագետի կարծիքը**, որը ձևավորվում ծրագրային ապահովման աուդիտի կամ վերլուծության արդյունքում՝ համապատասխան տեխնոլոգիական չափորոշիչների գնահատմամբ: Ստորև ներկայացվում է համակարգչային ծրագրերի արժեքի վրա ազդող հետևյալ տեխնոլոգիական չափորոշիչները.

– համակարգչային ծրագրի եզակիությունը և օգտագործման տնտեսական արդյունավետությունը (որոշվում է նույնատիպ ծրագրային ապահովման հետ համեմատական վերլուծություն կատարելու արդյունքում),

³³ Сорокина Е.М., Фадеева А.А., Оценка нематериальных активов в бухгалтерском учете, /Международный бухгалтерский учет, проблемы учета 5 (251) – 2013.

– համակարգչային ծրագրի սերտիֆիկացումը և լիցենզավորումը (օրինակ՝ ծրագիրը ներառված է էլեկտրոնային համակարգիչների և տվյալների բազաների միասնական ռեգիստրում, նաև իրականացվել է կամավոր սերտիֆիկացում),

– համակարգչային ծրագրի օգտագործման ոլորտները (օրինակ՝ գնահատվող ծրագիրը կարող է օգտագործվել միայն որոշակի ոլորտի ձեռնարկությունների համար կամ համընդհանուր է բոլոր ձեռնարկությունների համար՝ անկախ արդյունաբերության ճյուղից),

– փաստացի և կատարման ենթակա ծախսերի և եկամուտների ծավալը, կառուցվածքը (օրինակ՝ ծրագրային ապահովման մշակման, ձեռքբերման և տեղադրման արժեքը, ներառյալ՝ կատարված աշխատանքների գծով ծախսերը,

– համակարգչային ծրագրի պաշտպանության աստիճանը և օգտագործման ռիսկերը (լիցենզավորման կանոններին չհամապատասխանելը, տեղեկատվության կորուստը և արտահոսքը),

– համակարգչային ծրագրի ընթացիկ օգտագործման հնարավորությունները (օրինակ՝ որքան աշխատողներ կարող են այդ ծրագիրը միաժամանակյա օգտագործել):

– հաճախորդների շրջանակը, թիմի որակավորումը, ապրանքանիշի ճանաչելիությունը և այլն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի փորձագիտական կամ մասնագիտական կարծիքում արձանագրված առանձին չափորոշիչների վերլուծությամբ կարող են համադրվել համակարգչային ծրագրի օգտագործմամբ ապագա ժամանակահատվածում կանխատեսվող եկամուտների ձևավորման հնարավորությունները և կումուլյատիվ մեթոդի միջոցով համակարգված մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը (ընտրանքային ռիսկերի գործոնները): Վերջնարդյունքում դուրս բերված գեղչման տոկոսա-

դրույքը կարող է կիրառվել վերը ներկայացված (1) գեղջման բանաձևում՝ համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի ներկա արժեքը ստանալու համար:

Այսպիսով, վերը նշված մեթոդների համակցության միջոցով իրականացվող ոչ նյութական ակտիվի գնահատման դեպքում հաշվի են առնվում համակարգչային ծրագրի օգտագործմամբ ապագա ժամանակահատվածում կանխատեսվող եկամուտների ձևավորման հնարավորությունները և կումուլյատիվ մեթոդի միջոցով համակարգված մտավոր սեփականության օբյեկտին բնորոշ ռիսկերը, ինչն առավելագույն կերպով է նեղացնում ոչ նյութական ակտիվի կողմից գեներացվող եկամուտների կանխատեսումները՝ վերջինիս շուկայական արժեքին հանգելու հետ կապված հաշվարկներ կատարելիս³⁴:

³⁴ Մամիկոնյան Կ., Փիլոյան Ա. Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը դատական ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում, «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ ՓԱԲ, համար 11. 2024:

§ 5. Վեբ կայքի արժեքի որոշման մոտեցումները

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության շրջանակներում վեբ կայքի՝ որպես ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքի որոշումը ներկայումս բախվում է մի շարք մեթոդաբանական և գործնական մարտահրավերների: Մասնավորապես, մեթոդաբանության հարցերն առնչվում են այնպիսի խնդիրների հետ, որոնք պայմանավորված են ինչպես գնահատման մոտեցումների անորոշությամբ, այնպես էլ՝ իրավական և ֆինանսատնտեսագիտական բնույթի հիմնավորումների, որոշակի առումով, բացակայությամբ, իսկ գործնական մարտահրավերները բխում են հիմնականում կայքի գործառույթային միջավայրին հատուկ շուկայական արժեքի որոշման մեթոդական մոտեցումների կիրառման չհստակեցված նպատակային ուղղություններից:

Վեբ կայքը (ինտերնետային էջերի հավաքածու, website), համարվելով մտավոր սեփականության օբյեկտ, իրենից ներկայացնում է ծրագրային տարրերի համախումբ, որն ապահովում է վերջինիս գործարկումը և գրաֆիկական լուծումը: Հատկանշական է, որ նշված տարրերն առանձին-առանձին չեն կարող իրականացնել իրենց գործառույթները, ուստի վեբ կայքը պետք է դիտարկել որպես մեկ ծրագրային փաթեթ (միասնական օբյեկտ)՝ ոչ թե ֆինանսական կամ հարկային հաշվառման շրջանակներում կազմակերպության սովորական գործունեության շրջանակներում կատարված ծախսեր ներկայացնելու, այլ վերջինիս՝ որպես «ոչ նյութական ակտիվ» տնտեսագիտական բնույթի բովանդակություն վերագրելու և ճանաչելու համար:

Վեբ կայքերի հիմնական տեսակներն են՝ բիզնեսի այցեքարտ, առևտրի հարթակ (պորտալ), կատալոգ (պորտֆոլիո),

առցանց խանութ (ցանց), կորպորատիվ տեղեկատվական (հմիջային), լրատվական (ֆորում, բլոգ), թիրախային (պրոմո, բովանդակային նախագիծ), սոցիալական, խաղային (ժամանցային) պորտալ և այլն:

Կառուցվածքային տեսանկյունից ինտերնետային կայքը փոխկապակցված էջերի հավաքածու է, որոնք բովանդակությամբ կապված են միմյանց հետ և պատկանում են նույն կազմակերպությանը կամ ֆիզիկական անձին: Այն իրենից ներկայացնում է օբյեկտների համակցություն, որոնց շարքին են դասվում դոմենային անունը, հոսթինգը, դիզայնը, ծրագրային կոդը և բովանդակությունը³⁵: Ինտերնետային կայքը ոչ միայն ծրագրային, տեղեկատվական և մեդիա բաղադրիչների համակցություն է, այլև մարքեթինգային գործիք, որի՝ նաև լիարժեք օգտագործումից է կախված վաճառքի ծավալներն ընդլայնելու գործընթացը, քանի որ սպառողի առաջին շփումը ընկերության հետ, կարելի է ասել, տեղի է ունենում հենց կայքի միջոցով, ուստի հենց կայքից է կախված հաճախորդի՝ իր հետագա համագործակցության վերաբերյալ որոշման ընդունումը³⁶:

Վեր կայքի յուրահատուկ բնույթին համապատասխանող շուկայական կոնյուկտուրան ներառում է կայքի գործառության՝ ինչպես ընդհանուր տնտեսական միջավայրը, այնպես էլ ոլորտային առանձնահատկությունները: Այսինքն, նրանում ներառ-

³⁵ Хатунцев Н.А. К вопросу определения стоимости объектов судебной компьютерно-технической экспертизы // Теория и практика судебной экспертизы. 2021. Т. 16. № 3. С. 81–87. DOI: <https://doi.org/10.30764/1819-2785-2021-3-81-87>.

³⁶ Юсупова О. А. Клиентоориентированный подход в оценке качества сайта грузоперевозочной компании при обслуживании частных клиентов // Омский научный вестник. Сер. Общество. История. Современность. 2022. Т. 7, № 2. С. 141–147. DOI: <https://doi.org/10.25206/2542-0488-2022-7-2-141-147>.

ված են թե՛ մրցակցային, թե՛ տնտեսական և տեխնոլոգիական բաղադրիչներ, որոնք էլ ձևավորում են կայքի պահանջարկն ու արժեքը: Հարկ է նշել, որ շուկայական կոնյունկտուրայի հիմնական բաղադրիչներն են՝ տեխնոլոգիական զարգացումները, ոլորտային մրցակցությունը, պահանջարկի և առաջարկի դինամիկան, գովազդային և մոնետիզացիոն հնարավորությունները, օրենսդրական և կարգավորող միջավայրը, ինչպես նաև ֆինանսական ներդրումների և շուկայի գնահատման գործոնները³⁷:

Վեբ կայքի՝ որպես ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքի որոշումը պահանջում է մասնագիտական բազմակողմանի հետազոտություն, ինչը նաև ենթադրում է գնահատման տարբեր մոտեցումների համալիրի ու դրանցում ներառված գործիքակազմերի համակցված կիրառում: Այս պարագայում գնահատման հիմնական մոտեցումները և ընտրված հատուկ գործիքակազմերը կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով.

1. *Եկամտային մոտեցում (Income Approach)*: Այս մոտեցումը հիմնվում է վեբ կայքի կանխատեսվող ապագա դրամական հոսքերը (եկամուտները) զեղչմամբ ներկա արժեքին բերելու հաշվարկի վրա՝ հաշվի առնելով կայքի պոտենցիալ եկամտաբերությունը և այդ հոսքերի ժամանակային արժեքը: Հաշվարկման գործընթացը կարող է նման լինել «օգտագործման արժեքի» մոտեցման դեպքում կատարվող հաշվարկներին, սակայն արդար շուկայական արժեքը որոշելու համար ապագա եկամուտները պետք է գնահատվեն շուկայի մասնակիցների տեսանկյունից, այլ ոչ թե միայն տվյալ կազմակերպության կողմից: Ուստի, եկամտային մոտեցման կիրառումը պահանջում է խորը պատկերացումներ

³⁷ Investment valuation: tools and techniques for determining the value of any asset / Aswath Damodaran.— 3rd ed. pub. by John Wiley & Sons, 2012.

այն մասին, թե ինչպես շուկայի մասնակիցները կգնահատեն ոչ նյութական ակտիվից ստացվելիք օգուտները³⁸: Գնահատման հիմնական քայլերն են.

ա) ապագա դրամական հոսքերի կանխատեսումը, որն իրականացվում է զուտ շահույթի հաշվարկի օգնությամբ՝ վեր կայքի եկամուտների աղբյուրների (գովազդի, բաժանորդագրության, առևտրային գործարքների (առցանց առևտրի) հիման վրա,

բ) համապատասխան գեղջման (դիսկոնտավորման) տոկոսադրույքի որոշում կումուլյատիվ կառուցման մոդելով՝ հաշվի առնելով և գնահատելով ոչ նյութական ակտիվի առանձնահատկություններն ու այդ ակտիվից գեներացվող եկամտի հետ կապված նշանակալից ռիսկերը,

գ) ապագա դրամական հոսքերի որոշված տոկոսադրույքով դիսկոնտավորում՝ ներկա արժեքի ստացման նպատակով:

Ընդհանրացնելով՝ հարկ է նշել, որ այս մեթոդը համարվում է առավել հուսալի, երբ վեր կայքն ունի կայուն և կանխատեսելի եկամուտներ:

2. *Օգտագործման արժեքի մոտեցում (Value in Use approach):*

Այս մոտեցումը ևս հիմնվում է վեր կայքի ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի հաշվարկի վրա՝ հաշվի առնելով կազմակերպության կողմից վերջինիս շարունակական օգտագործման պայմանը: Հիմնականում կիրառվում է ակտիվների արժեզրկման ստուգման և որոշումների ընդունման գործընթացներում: Օգտագործման արժեքի մոտեցումը համարվում է կարևոր մոտեցում՝ հատկապես գնահատվող ակտիվների իրական օգտագործման ներուժի և ապագա եկամուտների կանխատեսման

³⁸ Reilly RF, Schwehs RP (2016) Guide to Intangible asset valuation. Wiley Finance, New York.

գործում, որի նպատակը՝ վերջիններս ոչ թե շուկայում վաճառելն է, այլ պահպանելն ու օգտագործելը:

3. *Շուկայական (համեմատական) մոտեցում (Market Approach):* Այս մոտեցումը հիմնվում է նմանատիպ բովանդակություն, որակական և տեխնիկական բնութագրեր, մարքեթինգային տվյալներ, եկամտաբերություն և վարկանիշ ունեցող վեբ կայքերի վաճառքի գործարքների նույնականացման վրա՝ համեմատականներ տանելով շուկայում առկա նմանատիպ կայքերի միջև: Գնահատման հիմնական քայլերն են.

ա) տեղի ունեցած գործարքների վերաբերյալ տվյալների հավաքագրում,

բ) համեմատական վերլուծություն՝ հաշվի առնելով գործարքների պայմանները, արժեքները և այլ գործոններ,

գ) ոլորտային տվյալների և մրցակցային դիրքի որոշում,

դ) շուկայական բազմապատկիչների (multiples) կիրառում (օրինակ՝ եկամտի կամ շահույթի):

Ընդհանրացնելով՝ հարկ է նշել, որ այս մեթոդն արդյունավետ է, երբ շուկայում նմանատիպ գործարքների վերաբերյալ առկա են բավարար տվյալներ:

4. *Ծախսային (արժեքային) մոտեցում (Cost Approach):* Այս մոտեցումը հիմնվում է վեբ կայքի ստեղծման և զարգացման համար կատարված ծախսերի արժեքների միագումարման սկզբունքի վրա: Գնահատման հիմնական քայլերն են.

ա) հավաքվում են տվյալներ ծրագրավորման, տեխնիկական զինման, բովանդակության, դիզայնի, հոստինգի, դոմենի, պահպանման և այլ կատարված ծախսերի վերաբերյալ,

բ) իրականացվում է տեխնոլոգիական մաշվածության և շուկայական փոփոխությունների հետևանքով արժեզրկման հաշվարկ,

գ) կիրառելով ծախսերի ընթացիկ փոխարինման արժեքի (Replacement Cost) մեթոդը՝ վերջնարդյունքում դուրս է բերվում վեր կայքի արժեքը:

Ինչպես ընդունված է համարել՝ փոխարինման արժեքի մոտեցումը ենթադրում է, որ շուկայի մասնակիցն ակտիվի համար չի վճարի ավելի, քան այն ծախսերը, որոնք կպահանջվեն տվյալ ակտիվը համարժեք օգտակարությամբ կամ գործառույթով փոխարինելու համար: Այս մոտեցումը պահանջում է ոչ նյութական ակտիվի փոխարինման արժեքի գնահատում նոր պայմաններում, այսինքն՝ վերլուծության օրվա ընթացիկ գներով ստեղծելու այնպիսի ոչ նյութական ակտիվ, որը համարժեք օգտակարություն կդրսևորի տվյալ ոչ նյութական ակտիվի նկատմամբ³⁹: Իհարկե, պետք է նկատի ունենալ, որ չնայած այս մոտեցումը հաշվի է առնում վեր կայքի ստեղծման հետ կապված իրական ծախսերը, սակայն չի արտացոլում վերջինիս շուկայական արժեքը, այսինքն՝ առնվազն բացակայում են ապագա եկամուտների և շուկայական պահանջարկի հետ կապված գործոնները: Հարկ է նշել, որ ծրագրային արտադրանքի արժեքի ոչ ճշգրիտ գնահատման պատճառներից մեկը տվյալ գործունեության ոլորտի թերի տեսական մշակվածությունն է: Ծախսերի գնահատման գործընթացում առկա է տերմինաբանական անհամաձայնություն և մասնագետների տարբեր կարծիքներ, որոնք արտահայտվում են գնահատման ընթացակարգերի կատարման ժամանակի և կրկնակի գնահատման անհրաժեշտության վերաբերյալ անորոշություններով, ինչպես և ծրագրային ապահովման տեղեկատվական

³⁹ Roberto Moro-Visconti, The Valuation of Intangible Assets: An Introduction // SSRN Electronic Journal · January 2019. DOI: <https://doi.org/10.2139/ssrn.3413524>.

ծավալի չափման միավորների վերաբերյալ տարակարծությամբ⁴⁰: Օրինակ, ծրագրային արտադրանքի տնտեսագիտական ուսումնասիրությունների հիմնական ուղղություններից մեկը՝ աշխատատարության (աշխատանքային ծախսերի) գնահատումն է: Այն իրենից ներկայացնում է իրավական, տնտեսական, կազմակերպատեսիսկական և այլ բնույթի միջոցառումների համակցություն և նպատակաուղղված է գնահատման օբյեկտի արժեքը որպես ապրանք որոշելուն⁴¹:

5. *Օգտակարության արժեքի մոտեցում (Utility-Based Approach)*: Այս մոտեցումը հիմնվում է վեբ կայքն օգտագործողների քանակի և բիզնեսի համար կայքի ստեղծած հարմարավետության ու օգտակարության գնահատման վրա: Գնահատման հիմնական քայլերն են.

ա) օգտագործողների ներգրավվածության վերլուծություն, որն իր մեջ ներառում է այցելությունների հաճախակիության, օգտագործողների բարձր ակտիվության և ցածր հրաժարման վերլուծությունը,

բ) գովազդներից եկամտաբերության (ներդրումների վերադարձելիության), նոր հաճախորդների ձեռք բերման և գովազդատուների ներգրավման գնահատականները,

գ) բիզնեսի ընդհանուր գնահատման համատեքստում վեբ կայքի օգտակարության արժեքի որոշումը:

⁴⁰ Мясников М.Р. Концептуальная модель оценки стоимости сложных заказных программных продуктов // Креативная экономика. – 2018. – Том 12. – № 3. – С. 367-384. DOI: <https://doi.org/10.18334/ce.12.3.38891>.

⁴¹ Ваганова Е.В., Земцов А.А., Миньков С.Л., Оценка стоимости разработки программного продукта: обзор // Проблемы учёта и финансов № 1(21) 2016. DOI: <https://doi.org/10.17223/22229388/21/8>.

Ներկայացված մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս համակարգել ֆինանսատնտեսագիտական փորձագիտական հետազոտություն իրականացնելու նպատակով վեբ կայքի՝ որպես ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքի որոշման մոտեցումների ընտրության և արդյունավետ կիրառության համար անհարաժեշտ վերլուծական տեղեկատվությունը և դասակարգել հետևյալ բաժինների (տե՛ս ստորև ներկայացվող աղյուսակը)։

Աղյուսակ 1

Վեբ կայքի շուկայական արժեքի որոշման մոտեցումների ընտրության և արդյունավետ կիրառության համար անհարաժեշտ տեղեկատվության դասակարգումը

<p align="center">Ծախսեր</p>	<p>Վեբ կայքի ստեղծման (դիզայնի նախագծման, անիմացիայի տեղադրման, ծրագրերի ներմուծման և ինտեգրման, գրանցման, առաջխաղացման, սպասարկման և այլ ծառայությունների) հետ կապված կազմակերպության փաստաթղթերով հիմնավորված ծախսեր, կամ՝ նմանատիպ կայքեր ստեղծող կազմակերպությունների և համակարգչային մասնագետների կողմից որոշակի մասնագիտական կարծիքներ, որոնցում հավաստվում են կայքը ստեղծելու և այն սպասարկելու հետ կապված ծառայությունների արժեքներ կամ գնհարցումներ։</p>
<p align="center">Եկամուտներ</p>	<ul style="list-style-type: none"> - Վեբ կայքի էջերում տեղադրված գովազդային կրիչների դիմաց առնվազն վերջին 3 տարիների համար ստացված եկամուտները հավաստող փաստաթղթեր, - ֆինանսական կազմակերպությունների կողմից որպես ֆինանսական վերլուծության գործիք օգտագործելու դիմաց առնվազն վերջին 3 տարիների համար ստացված եկամուտները հավաստող փաստաթղթեր։
<p align="center">Այցելությունների վերաբերյալ տվյալներ</p>	<p>Արհեստական բանականության (AI) տեխնոլոգիաների միջոցով (Google Analytics, Fathom Analytics, Oribi, GoSquared, Openstat, Яндекс Метрика և այլ) վեբ կայքի ռեալ այցելությունների վերաբերյալ ժամանակագրական կարգով տվյալներ։</p>

Թեստավորման վերաբերյալ տվյալներ	Անկախ ծառայություններում թեստավորում (benchmarking), որի համար ներգրավվում են վեբ-վերլուծության ոլորտում հեղինակավոր այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են Alexa-ն, GemiusAudience-ը, Google Trends-ը և այլն:
Վարկանշային տվյալներ	Արհեստական բանականության (AI) տեխնոլոգիաների միջոցով վեբ կայքի մրցակցային դաշտում տեղորոշման վերաբերյալ վարկանշային տվյալներ:
Մարքեթինգային ցուցանիշներ	Արհեստական բանականության (AI) տեխնոլոգիաների միջոցով վեբ կայք ռեալ այցելությունների հիման վրա որոշվող գովազդից եկամտաբերության տարածաշրջանային մարքեթինգային ցուցանիշներ:
Որակական բնութագրեր	Վեբ կայքի ֆունկցիոնալ հնարավորությունները, հուսալիությունը, գործնականությունը, արդյունավետությունը, սպասարկելիությունը, բջջային համատեղելիությունը:
Տեխնիկական աուդիտի տվյալներ	Վեբ կայքի օպտիմալ բեռնման արագության ստուգում, սխալների առկայության, ռիսկային էջերի կրկնօրինակների, սերվերի կարգավորումների, ֆայլերի սխալների ստուգում և ավելորդ ֆայլերի հայտնաբերում:
Աուդիտի այլ տեսակների տվյալներ	Վարկանշային, կիրառելիության, մարքեթինգային և որոնողական աուդիտներ:

Վեբ կայքի որակական բնութագրերի վերաբերյալ, ինչպես նշվեց, տվյալ տեղեկատվության շրջանակները պետք է ընդգրկեն կայքի՝

- ֆունկցիոնալ հնարավորությունը (ներառում է կիրառելիության, ճշգրտության, ինտեգրման, համադրելիության և պաշտպանվածության ցուցանիշները),
- հուսալիությունը (ներառում է կայունության, սխալների հանդեպ դիմակայման և վերականգնելիության ցուցանիշները),

- գործնականությունը (ներառում է ըմբռնելիության, սովորելու առումով դյուրինության և օգտագործման պարզության ցուցանիշները),
- արդյունավետությունը (ներառում է կայքի օպտիմալացման ապահովման և արդյունավետ աշխատանքի ցուցանիշները),
- սպասարկելիությունը կամ տեխնիկական աջակցությունը (ներառում է թեստավորման, անխափան գործելու, փոփոխելիության և վերլուծելիության ցուցանիշները),
- բջջային համատեղելիությունը (ներառում է ադապտացման, ներդրման պարզության, համապատասխանության և փոխարինելիության ցուցանիշները):

Վեբ կայքի տեխնիկական աուդիտի վերաբերյալ հարկ է նշել, որ, այն իրենից ենթադրելով կայքի համակողմանի վերլուծություն, մասնավորապես՝ թույլ է տալիս հայտնաբերել և շտկել կայքի տեխնիկական սխալները, որոնք խոչընդոտում են վերջինիս առաջխաղացմանը որոնողական համակարգերում և սպառնում անվտանգությանը կամ հաճախորդների մասին տեղեկատվության գաղտնիությանը, նաև վերլուծում օգտատիրոջ համար որակի և օգտակարության տարբեր չափանիշներ: Տեխնիկական աուդիտի հիմնական ուղղություններն են.

- վեբ կայքի էջերի օպտիմալ բեռնման արագության ստուգում տարբեր սարքերում,
- վեբ կայքում սխալների առկայության ստուգում, մասնավորապես՝ ֆունկցիոնալ խախտումներ, ոչ ճիշտ աշխատանք, HTML-ի սխալ սեմանտիկ նշագրումներ, ավելորդ վերահղումներ և այլն,
- անվտանգության տեսակետից ռիսկային և ավելորդ ֆայլերի հայտնաբերում,

– սերվերի կարգավորումների, չգործող հղումների, xml ֆայլերի սխալների, էջերի կրկնօրինակների ստուգում և այլն:

Վեբ կայքի աուդիտի այլ տեսակների, մասնավորապես՝ վարկանշային, կիրառելիության, մարքեթինգային և որոնողական աուդիտների վերաբերյալ հարկ է նշել, որ այս ստուգումները, կախված լինելով տեխնիկական աուդիտի վերջնարդյունքներց (QA, QC, SEO, Uzability), իրականացվում են կայքի օպտիմալացման, հարմարավետության, կենսունակության և մրցունակության հնարավորությունների կամ ցուցանիշների հիման վրա:

Ինչպես հայտնի է, ոչ նյութական ակտիվների գնահատման ժամանակ սովորաբար տարբերակում են մի քանի կատեգորիաներ, այդ թվում՝ «առևտրային» և «մարքեթինգային»⁴²: Այս իմաստով հարկ է հիշել, որ առևտրային ոչ նյութական ակտիվները հիմնականում կապված են կազմակերպության հիմնական գործունեության հետ և ներառում են, մասնավորապես՝ արտոնագրերը, դրանց իրավունքները, ապրանքային նշանները, տեխնոլոգիական ու ծրագրային գաղտնիքները և այլն: Ինչ վերաբերում է մարքեթինգային ոչ նյութական ակտիվներին, ապա դրանք նպաստում են ապրանքների և ծառայությունների շուկայավարմանը՝ ապահովելով ճանաչելիություն, բրենդի արժեք և սպառողների լոյալություն. դրանց օրինակներ են՝ ընկերության ֆիրմային անվանումը, լոգոն, դոմենային անունները և գովազդային արշավների արդյունքում ձևավորված համբավը:

Այդուհանդերձ, ֆինանսատնտեսագիտական փորձագիտական հետազոտությունների իրականացման պարագայում հարկ է քննարկել վեբ կայքի՝ որպես առցանց առևտրային և

⁴² Միջազգային գնահատման ստանդարտներ (IVS), 210 բաժին:

մարքեթինգային կատեգորիաների գործառության միջավայրերում ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքի որոշման մեթոդական մոտեցումների կիրառման առնվազն չորս նպատակային ուղղություններ.

Աղյուսակ 2

Վեբ կայքի առևտրային կամ մարքեթինգային միջավայրում գործառության բովանդակությունը և կիրառելի գնահատման մոտեցումները

№	Վեբ կայքի առևտրային կամ մարքեթինգային կատեգորիաների գործառության միջավայրը	Վեբ կայքի գործառության բովանդակությունը	Կիրառելի գնահատման մոտեցումները
1	լրատվության կամ վերլուծական տեղեկատվության միջավայր	կայքում տեղադրվող գովազդային կրիչներից ստանում է եկամուտ	եկամտային և օգտագործման արժեքի մոտեցումների համալիր
2	ֆինանսական վերլուծության կամ ֆինանսական գործիքներով սպասարկման միջավայր	ծառայություններ է մատուցում կամ իր գործիքները ժամանակավորապես օգտագործման է տրամադրում տարբեր անձանց՝ որոշակի վճարումների դիմաց	եկամտային մոտեցում
3	առցանց առևտրի միջավայր	կազմակերպության սովորական գործունեությունից ստանում է եկամուտ կամ նպատակը՝ այն զարգացնելը, հզորացնելը և հետագայում վաճառելն է	ծախսային և շուկայական մոտեցումների համալիր

4	սոցիալական կամ ժամանցային միջավայր	գովազդային կամ խաղային գործունեությունից, ինչպես և այլ առցանց ծառայությունների մատուցումից ստանում է եկամուտ	ծախսային, օգտակարության արժեքի և օգտագործման արժեքի մոտեցումների համալիր
---	------------------------------------	--	--

Այսպիսով, վեբ կայքերի դերը ժամանակակից թվային տնտեսության մեջ բազմաշերտ է և կախված է դրանց գործառույթային միջավայրից: Առևտրային և մարքեթինգային կատեգորիաների գործառույթային միջավայրերում վեբ կայքերը ծառայում են տարբեր նպատակների համար՝ սկսած տեղեկատվության տարածումից մինչև առցանց առևտրի կազմակերպում, իսկ դրանց շուկայական արժեքը, ինչպես նաև կազմակերպության ակտիվների վրա վերջիններիս ներազդեցությունը կախված են կայքերի գործառույթային բովանդակությունից, եկամտի գեներացման հնարավորությունից և շուկայական դիրքից: Այն կայքերը, որոնք ինտեգրում են բազմաֆունկցիոնալ ծրագրային լուծումներ (օրինակ՝ ֆինանսական գործիքներ, առցանց առևտրին ներկառուցված վճարահաշվարկային համակարգեր կամ սոցիալական փոխազդեցություն հարթակներ), սովորաբար ունենում առավել բարձր շուկայական արժեք: Հետևաբար, վեբ կայքի՝ որպես կազմակերպության ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքի որոշումը պետք է իրականացվի՝ հաշվի առնելով դրանց գործառույթային բովանդակությունը, եկամտաբերության աղբյուրները, ինչպես նաև շուկայական կոնյունկտուրան և տեխնոլոգիական զարգացումների մակարդակը՝ կիրառելով ճիշտ գնահատման մոտեցումներ և համապատասխան վերլուծական տեղեկատվություն:

§ 6. Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների արժեքների որոշման մոտեցումները

Ոչ նյութական ակտիվների ֆինանսատնտեսագիտական փորձագիտական հետազոտության նպատակը կայանում է՝ դրանց հնարավորինս շուկայականին ձգտող արդար տնտեսական արժեքի ձևավորման, վերջինովս պայմանավորված կազմակերպության ակտիվների կազմում դրա լիարժեք արտացոլման, և փաստորեն՝ ներդրումային թափանցիկության ու ներդրողների շահերի պաշտպանության տեսանկյունից նաև ընկերության իրական արժեքի ձևավորման ապահովման հետ կապված խնդիրների հետազոտման մեջ:

Ներկայացված մոտեցումների խորապատկերին ստորև փորձ է արվել դիտարկել արդյունաբերական ձեռնարկությունների սեփականություն հանդիսացող **գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների** (օգտակար մոդել, լավարարական առաջարկ, միկրոսխեմա, դիզայն) արժեքների որոշման կիրառական մեթոդաբանության որոշ հարցեր:

Ոչ նյութական ակտիվների, մասնավորապես՝ գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների շուկայական արժեքների գնահատումը համարվում է տնտեսական գնահատման ամենաբարդ ուղղություններից մեկը, քանի որ այն իր մեջ ներառում է ոչ միայն ֆինանսական ցուցանիշների հաշվարկ, այլև բարդ կանխատեսումներ՝ կապված տեխնոլոգիական նորարարության կենսունակության, շուկայի պահանջարկի, իրավական պաշտպանության և տնտեսական արդյունավետության հետ:

Միջազգային պրակտիկայում շարունակաբար առաջարկվում են նոր մեթոդական լուծումներ, որոնք կիրառվում են կազմակերպությունների գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների գնահատման համար: Ի հավելում վերը ներկայացվածի, գիտական շրջանակներն այս ուղղությամբ շարունակում են առաջարկել առավել ճշգրիտ ու գործնական մեթոդաբանական մշակումներ, որոնք կոչված են ապահովելու գնահատման թափանցիկ և հիմնավորված գործընթացները:

Հեղինակներից ոմանք գտնում են, որ ոչ նյութական ակտիվների հաշվառման վերաբերյալ գոյություն ունի տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ ոչ նյութական ակտիվների, մտավոր կապիտալի, գիտելիքային ակտիվների սահմանումների և դրանց դասակարգման դեպքում: Նրանք անհրաժեշտություն են տեսնում հաշվապահական հաշվառման այնպիսի մոդելների զարգացման հարցում, որոնք ավելի լավ կարտացոլեն ֆինանսական հաշվետվություններում ոչ նյութական ակտիվների արժեքը⁴³: Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS) շրջանակներում ոչ նյութական ակտիվների արժևորման խնդիրների լուծման առումով ֆինանսական տեղեկատվության համապատասխանության և հուսալիության միջև հավասարակշռության ապահովումը շատ արդիական կարող է լինել գլոբալ շրջանակի պարագայում բարձրորակ ֆինանսական հաշվետվությունների ստեղծման համար: Այնուամենայնիվ, միջազգային ստանդարտների ընդունումն ու ոչ նյութական ակտիվների հաշվառման ներառումը հաշվապահական հաշվեկշիռներում նոր հարցեր են առաջադրել ֆինանսական տեղեկատվության հստա-

⁴³ Henri Hussinki, Tatiana King, John Dumay, Erik Steinhöfel, Accounting for intangibles: a critical review //Journal of Accounting Literature (8 February 2024), DOI: <https://doi.org/10.1108/JAL-05-2022-0060>.

կության և հուսալիության համադրության վերաբերյալ ռազմավարական որոշումներ կայացնելու համատեքստում⁴⁴:

Մեկ այլ հեղինակի կողմից առաջարկվում է ոչ նյութական ակտիվների արժևորման մոդել՝ հիմնված պանելային տվյալների վրա: Մոդելը ներառում է արտադրության և ծախսերի ֆունկցիաների համադրություն՝ օգտագործելով ֆիքսված ազդեցությունների մոդելներ: Կատարված վերլուծությունները ցույց են տվել, որ ոչ նյութական ակտիվների արժեքը սերտորեն կապված է ոչ թե հաշվապահական արժեքի, այլ շուկայական արժեքի հետ⁴⁵:

Ինչ վերաբերում է տնտեսության տարբեր ոլորտներում ընկերությունների ֆինանսական արդյունքների վրա մտավոր կապիտալի բաղադրիչների ազդեցությանը, ապա որոշ հեղինակներ էլ գտնում են, որ այդ բաղադրիչները չեն ստեղծում ինքնուրույն արժեք, այլ հատկապես դրանց ազդեցությունը մեծանում է, երբ համակցվում են այլ ակտիվների հետ: Այդուհանդերձ, ընկերությունները պետք զարգացնեն այն մտավոր կապիտալի բաղադրիչները, որոնք առավելապես նպաստում են ֆինանսական արդյունքների բարելավմանը⁴⁶:

Վերջին տասնամյակում ակտիվորեն կիրառվում են նաև նորարարական այնպիսի մոդելներ, որոնք արհեստական բանականության և մեքենայական ուսուցման գործիքների

⁴⁴ Kaoutar Benmoumen, Abdelkader Charba, Valuation of Intangible Assets under IAS/IFRS: Accounting Challenges and Perspectives // International Journal of Accounting, Finance, Auditing, Management and Economics – IJAFAME, DOI: <https://doi.org/10.5281/zenodo.14927687>.

⁴⁵ Tomohiro Yamaguchi, Intangible Asset Valuation Model Using Panel Data // Asia-Pacific Financial Markets, Volume 21, March 2014, DOI: <https://doi.org/10.1007/s10690-014-9181-z>.

⁴⁶ Darya Dancaková, Jozef Glova, The Impact of Value-Added Intellectual Capital on Corporate Performance: Cross-Sector Evidence // Risks 2024, 12. 151. DOI: <https://doi.org/10.3390/risks12100151>.

ներառամբ հնարավորություն են տալիս ավտոմատացնել արժեքի որոշման գործընթացն իրական ժամանակում՝ հիմնվելով տվյալների վերլուծության և կանխատեսման ալգորիթմների վրա: Հատկապես կարևոր է արժևորել արդյունաբերական ձեռնարկությունների սեփականություն հանդիսացող օգտակար մոդելներն ու լավարարական առաջարկները, քանի որ դրանք էական ազդեցություն ունեն կազմակերպության տեխնոլոգիական զարգացվածության և շուկայում մրցունակության մակարդակի վրա⁴⁷:

Պետք է ընդգծել, որ գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների՝ որպես ոչ նյութական ակտիվների արժեքի որոշումը պահանջում է համակցված մոտեցում, որն իր մեջ կարող է ներառել ինչպես դասական գնահատման մեթոդներ, այնպես էլ տվյալահեն և նորարարական գործիքներ: Գործնականում առավել կիրառելի են գնահատման հետևյալ հիմնական ուղղությունները.

1. *Շուկայական համեմատությունների մոտեցումը* կիրառվում է այն դեպքերում, երբ հնարավոր է, օրինակ, նույնատիպ արտոնագրերի կամ օգտագործման պայմանագրերի վերաբերյալ բաց տվյալների հավաքագրում:
2. *Եկամտային մոտեցումը* հիմնված է ՄՍՕ միջոցով առաջացող ապագա դրամական հոսքերի կանխատեսման վրա: Գործնականում այս մեթոդը կիրառվում է այն ձեռնարկություններում, որտեղ, օրինակ, գյուտի կամ օգտակար մոդելի կիրառումը ուղղակիորեն կապվում է արտադրական ծախսերի նվազեցման կամ վաճառքի ծավալների աճի հետ:

⁴⁷ Atika Nashirah Hasyati, Adhi Kurniawan, Measuring Intangible Assets Using Parametric and Machine Learning Approaches // BPS – Statistics Indonesia (2022). URL: <https://arxiv.org/pdf/2212.03025>.

3. *Ծախսային մոտեցումը* կիրառելի է այն իրավիճակներում, երբ նորարարական լուծման շուկայական համարժեք գոյություն չունի: Այս մոտեցմամբ հաշվարկվում է, օրինակ, արդյունաբերական նմուշի ստեղծման, մշակման և փորձարկման իրական կամ փոխարինող արժեքը:
4. *Հիբրիդային մոդելները* համադրում են շուկայական, եկամտային և ծախսային մեթոդները՝ ապահովելով առավել հավաստի արդյունքներ (վերջին տարիներին նկատվում է հատկապես դրանց կիրառման աճ):
5. *Օգտագործման պայմանագրերն* իրենց կառուցվածքում ներառում են ոռոյալթիների չափանիշները, ժամկետները և օգտագործման սահմանափակումները:
6. *Արհեստական բանականության գործիքների* օգտագործմամբ, օրինակ, բազմաթիվ արտոնագրերով գործարքների տվյալներն ալգորիթմների միջոցով հնարավոր է համադրել և իրական ժամանակում առաջարկել արժեքային միջակայք:

Ինչպես կարելի էր ենթադրել՝ գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների (դրանց արտոնագրերի, լիցենզիաների և օգտագործման այլ պայմանագրերի) արժեքների որոշման խնդիրը պահանջում է բազմակողմանի մոտեցում, որը համադրում է տեսական հիմքերը և գործնական մեխանիզմները: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ միայն դասական մեթոդաբանության կիրառումը բավարար չէ. անհրաժեշտ է ինտեգրել շուկայական համեմատություններ, եկամտային և ծախսային տարբեր մոդելներ, ինչպես նաև նորարարական տվյալահեն գործիքներ: Ընդհանուր առմամբ, նշված ոչ նյութական ակտիվների գնահատման, այն է՝ շուկայական արժեքների հաշվարկի գործնական քայլերը կայանում են հետևյալում.

- 1) Տվյալ ոչ նյութական ակտիվի վերաբերյալ իրավական և տնտեսական վերլուծություն:
- 2) Օգտագործման ժամկետի և իրավական պաշտպանության սահմանափակումների որոշում:
- 3) Ակնկալվող եկամուտների և ծախսերի կանխատեսում:
- 4) Վտանգերի (ռիսկերի) և զեղչման տոկոսադրույքի ընտրություն:
- 5) Արդյունքում՝ ոչ նյութական ակտիվի շուկայական կամ արդար տնտեսական արժեքի որոշում:

Արդյունաբերական ձեռնարկությունների և նորարարական ոլորտի համար գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների շուկայական արժեքների որոշումը միայն իրավական խնդիր չէ, այլև նաև տնտեսական անհրաժեշտություն: Այս առումով քննարկվող մեթոդաբանության ներդրումը կարող է նպաստել.

- ոչ նյութական ակտիվների հաշվառման թափանցիկությանը,
- կազմակերպությունների միջև արդար մրցակցության հաստատմանը,
- ներդրումային գրավչության բարձրացմանը և ամրապնդմանը,
- ֆինանսական ռեսուրսների ներգրավման հնարավորությունների ընդլայնմանը,
- նորարարական տեխնոլոգիաների ներդրման խթանմանը:

Այսպիսով, հատկապես պետք է կարևորել համակցված մոտեցման կիրառումը, որն իր մեջ կարող է միավորել ՄՍՕ հաշվառման թափանցիկությունը, իրավական պաշտպանվածությունը, տնտեսական գնահատումը և պետական աջակցությունը: Մեթոդաբանության նշված վեկտորով զարգացումը,

ինչպես նաև գործնական մեխանիզմների ներդրումը ոչ միայն կապահովեն արդար և հիմնավորված արժեքի որոշում, այլև կձևավորեն նորարարական տնտեսության կայուն զարգացման հիմքեր:

Ստորև աղյուսակի տեսքով առաջարկվում է կազմակերպությունների համար գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների՝ որպես ոչ նյութական ակտիվների գնահատման և կառավարման հիմնարար սկզբունքներ, որտեղ յուրաքանչյուր կետ ներկայացված է հստակ, կոնկրետ առաջարկով և իր կիրառական նշանակությամբ:

Աղյուսակ 1.

Հիմնական ոլորտ	Առաջարկներ	Կիրառական նշանակությունը
Հաշվառում	Անհրաժեշտ է կազմել գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների վերաբերյալ կենտրոնացված ցուցակ՝ ներառելով իրավական, տնտեսական և կիրառական տվյալները	Ապահովում է տվյալների ամբողջականություն և հեշտացվող կառավարման գործընթացը
ՄՍՕ օգտագործման պայմանագրեր	Պայմանագրերը պետք է կառուցել պարզ ձևաչափով՝ ամրագրելով դրանցից ստացման ենթակա եկամտաբերությունը, իրավական պաշտպանությունը և ճանաչելիությունը	Թույլ է տալիս վերահսկել շահութաբերությունն ու իրավական անվտանգությունը
Շուկայական համեմատություններ	Հավաքագրել նույնատիպ գործարքների վերաբերյալ տվյալները	Հնարավորություն է տալիս ձևավորել մոտավոր շուկայական

		արժեքը
Եկամտային գնահատում	Կանկատեսել ակտիվից սպասվող եկամուտը տարբեր սցենարներով (զգուշավոր, միջին, բարենպաստ)	Ապահովում է արժեքի ավելի հավասարակշռված և հիմնավորված գնահատումը
Ծախսերի փոխարինման արժեք	Հաշվարկել ակտիվի ստեղծման համար կատարած ծախսերի գումարը, որը կպահանջվեր ակտիվը փոխարինելու համար	Ապահովում է փոխարինման արժեքի իրատեսությունը և ֆինանսական հաշվառման հստակությունը
Տվյալների վրա հիմնված գործիքներ	Ներդնել ավտոմատացված ծրագրեր և գնահատման գործընթացի համար վերլուծական գործիքներ	Արագացնում է գնահատման գործընթացը և նվազեցնում մարդկային գործոնը
Ֆինանսական ռեսուրսների ներգրավում	ՄՄՕ-ն ներկայացնել որպես երաշխիք (գրավ) վարկ կամ ներդրում ներգրավելու նպատակով	Ընդլայնում է ֆինանսական հնարավորությունները՝ ապահովելով լրացուցիչ ռեսուրսներ
Հաշվապահական և հարկային թափանցիկություն	Արտացոլել ոչ նյութական ակտիվների արժեքը ֆինանսական հաշվետվություններում և հարկային հաշվարկներում	Բարձրացնում է ներդրողների վստահությունը, հաշվետվությունների և հաշվարկների հուսալիությունը
Վերջնական նպատակ	Միավորել բոլոր առաջարկները՝ ապահովելով ոչ նյութական ակտիվների արժեքի ճիշտ գնահատումը և կառավարումը	Բարձրացնում է կազմակերպության կապիտալի արժեքը, մրցունակությունը, ներդրումային գրավչությունը և նորարարական զարգացման ներուժը

Ինչ վերաբերում է գյուտի, հայտնագործության և արդյունաբերական նմուշի՝ որպես ոչ նյութական ակտիվների տնտեսագիտական փորձաքննության նպատակներին, ապա հարկ է ընդգծել, որ նախաձեռնողների կողմից առաջադրվող հարցերը հիմնականում ընդգրկված են կրած վնասի պարզման շրջանակում, որն առաջացել է, երբ այն օգտագործվել է առանց գյուտի կամ արդյունաբերական նմուշի իրավունքի սեփականատեր համարվող անձի կամ կազմակերպության կողմից տրված թույլտվության: Փորձաքննություն կարող նախաձեռնվել, երբ գյուտի, հայտնագործության և արդյունաբերական նմուշի արժեքներն անհրաժեշտություն է առաջացել ընդգրկել կազմակերպության հաշվեկշռում, կանոնադրական կապիտալում, ինչպես նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում ոչ նյութական ակտիվները վաճառել, հեղինակային իրավունքի չափը որոշել, մտավոր սեփականության իրավունքները փոխանցել կամ վաճառել և այլն:

Այստեղ հարկ է դիտարկել գնահատման մոտեցումներում գյուտի, հայտնագործության և արդյունաբերական նմուշի՝ որպես ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքների որոշման որոշ էական առանձնահատկություններ:

Ծախսային մոտեցմամբ հաշվարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն բոլոր հնարավոր ծախսերը (Q_8), որոնք կարող են առաջանալ ոչ նյութական ակտիվի հայտնագործման ժամանակ՝ դիտարկելով գումարելիների տեսքով.

$$Q_8 = q_1 + q_2 + q_3 + q_4 + q_5 + q_6 + q_7 + q_8 + \dots + q_n \quad (1)$$

որտեղ՝

q_1 - տեսական ուսումնասիրությունների հետ կապված ծախսեր,

q_2 - հետազոտական ծախսեր,

q₃ - փորձարկումների հետ կապված ծախսեր,

q₄ - կազմակերպությունների կողմից մատուցված ծառայություններից առաջացած ծախսեր,

q₅ - նախագծա-նախահաշվային ծախսեր,

q₆ - գյուտի կամ արդյունաբերական նմուշի գրանցման հետ կապված ծախսեր,

q₇ - ձևավորման ծախսեր,

q₈ - դիզայնի ծախսեր,

q₉ - լաբորատոր ծախսեր,

q_n - այլ ծախսեր:

Սակայն գնահատման այս մեթոդն ամբողջությամբ չի արտացոլում ոչ նյութական ակտիվի արժեքը, այն արտահայտում է վերջինիս սկզբնական արժեքը, քանի որ հնարավոր չէ պարզել նրա տնտեսական կամ ֆինանսական նշանակությունը կամ արդյունավետությունը տնտեսության մեջ:

Շուկայական մոտեցմամբ հաշվարկելու համար անհրաժեշտ է նկատի ունենալ ոչ նյութական ակտիվի եզակի լինելը կամ նրա յուրահատկությունները (շուկայում միակը լինելը), այն կիրառվում է հատուկ այն դեպքերում, երբ շուկայում առկա է ոչ նյութական ակտիվին բնորոշ լուծումներով և օգտագործվող նյութերով, գործառույթներով և մեկ այլ տեխոգիական լուծումներով ոչ նյութական ակտիվ, սակայն որի դեպքում ստացվում է շատ մոտավոր արժեքը: Ինչպես հայտնի է, շուկայական արժեքը՝ ամենահավանական գինն է, որով ոչ նյութական ակտիվը կարող է վաճառվել բաց շուկայում մրցակցային պայմաններում: Այնուամենայնիվ, որոշ ոչ նյութական ակտիվների համար անհնար է խոսել գործարքի ամենահավանական գնի մասին, քանի որ նման ոչ նյութական ակտիվների շուկան ՀՀ-ում թույլ է զարգացած կամ գործնականում գոյություն չունի:

Եկամտային մոտեցմամբ հաշվարկելու դեպքում ստացվում է ոչ նյութական ակտիվի շուկայական արժեքին բավականին մոտ արժեք, քանի որ ցանկացած ոչ նյութական ակտիվի հիմքում դրված է նրա տնտեսական ներագդեցությունը, այն է՝ խթանել տնտեսությունը շահույթ ստանալու նպատակով: Որքան երկար ժամանակ է օգտագործվում այն, այնքան ավելի մոտ կլինի գնահատված շուկայական արժեքը նրա իրական մեծությանը: Հարկ է նաև նշել, որ եկամտային մոտեցման հիմնական թերությունը կայանում է հաշվարկների համար անհրաժեշտ նախնական տեղեկատվության ստացման դժվարության մեջ:

Ինչպես հայտնի է նախագծերի ֆինանսավորման գնահատման համար առկա են բազմաթիվ մոտեցումներ, որոնք հիմնված են դրամական հոսքերի զեղչման (դիսկոնտավորման) մեթոդի վրա: Առավել հայտնի են կապիտալի միջին կշռված արժեքը (WACC), զուտ ներկա արժեքը (NPV), ներքին եկամտաբերության նորման (IRR) և ներդրումների վերադարձի ժամկետը (PB):

Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների շուկայական արժեքին մոտարկվող մեծությունները, մասնավորապես, առաջարկվում է որոշել դրամական հոսքերի զեղչման (DCF) մեթոդի կիրառմամբ, հետևյալ սկզբունքով.

$$M_x = CF_1/(1+i) + CF_2/(1+i) + CF_3/(1+i) + \dots + CF_n/(1+i) \quad (2)$$

որտեղ՝

M_x – ոչ նյութական ակտիվի մեծությունն է X ժամանակաշրջանում,

CF – դրամական հոսքերի տարեկան մեծությունն է,

i – զեղչման տոկոսադրույքը, որն օգտագործվում է ապագայում ստացվող դրամական հոսքերի ներկա արժեքի բերման հաշվարկների համար:

Զեղչման տոկոսադրույքի մեծությունն ուղղակիորեն ազդում է ոչ նյութական ակտիվից գեներացվող դրամական հոսքերի վրա, այն որպես փոփոխական մեծություն կախված է մի շարք գործոններից՝ ոչ նյութական ակտիվի տեսակից, ստեղծման համար կատարված ներդրումներից, վերաֆինասավորման մեծությունից, կազմակերպության շահութաբերությունից, ընտրված ժամանակահատվածում արժեզրկման մեծությունից, սեփական կապիտալի մեծությունից, շահութահարկի դրույքաչափից և այլն:

Գյուտի, հայտնագործության և արդյունաբերական նմուշի շուկայական արժեքն առաջարկվում է որոշել ստորև ներկայացվող **բանաձևային մոդելի** օգնությամբ՝ հաշվի առնելով նախորդ ժամանակաշրջանների դրամական հոսքերի միջին թվաբանականը, ինչպես նաև ապագա ժամանակաշրջաններին կանխատեսվող դրամական հոսքերը և ոչ նյութական ակտիվի վրա կատարված ծախսերը.

$$DCF = \frac{C - F_t}{(1 + i)^t} \quad (3)$$

$$C = \frac{\sum_1^z c^z - \sum_1^n c^n}{X} \quad (4)$$

որտեղ՝

C – գեներացված դրամական հոսքերի միջին մեծությունն է,
 c^n – հայտնագործման տարվան նախորդող ժամանակաշրջանների ընթացքում գեներացված դրամական հոսքերի գումարային մեծությունն է,

c^z – հայտնագործման տարվան հաջորդող (ապագա) ժամանակաշրջանի դրամական հոսքերի գումարային մեծությունն է (նոր ակտիվի դեպքում՝ կանխատեսվող դրամական հոսքերը):

X – անցյալ և ապագա դիտարկվող ժամանակաշրջանների ընդհանուր թիվը,

F_t – ոչ նյութական ակտիվի ներդրման և հետագա օգտագործման ընթացքում կատարվող անհրաժեշտ կամ լրացուցիչ ծախսերն են t ժամանակաշրջանում,

i - զեղչման տոկոսադրույքն է:

Բանաձև (4)-ն արտահայտում է ոչ նյութական ակտիվից գեներացվող դրամական հոսքերի դինամիկ փոփոխությունը, որը հաշվարկվում է՝ որպես ապագա կանխատեսվող և անցյալում արձանագրված դրամական հոսքերի տարբերության և դիտարկվող ժամանակաշրջանների թվին բաժանման արդյունք: Այսինքն, ստացվում է կանխատեսվող աճի տեմպը (incremental cash flow), որը և, ըստ ժամանակաշրջանների քանակի, միջինացվել է (աճը՝ մեկ ժամանակաշրջանի կտրվածքով):

Բանաձև (3)-ը կարող է համարվել բանաձև (4)-ից ստացված C-ով՝ ընկալվելով որպես տարեկան կանխատեսվող աճի չափ: Այս դեպքում բանաձևային մոդելում կարելի է ներառել հետևյալ հավասարությունը.

$$C_t = C_0 + t \cdot \frac{\sum c^z - \sum c^n}{X} \quad (5)$$

Այսինքն, յուրաքանչյուր տարվա կանխատեսվող դրամական հոսքը հաշվվում է՝ ելնելով սկզբնական արժեքից և տարեկան աճի միջին չափից: Այնուհետև C_t -ը ներառվում է DCF հաշվարկում.

$$V_0 = \sum_{t=1}^T \frac{(C_0 + t \cdot C) - F_t}{(1+i)^t} \quad (6)$$

Այս մոտեցումը թույլ է տալիս հաշվի առնել ոչ միայն ընթացիկ դրամական հոսքերի մակարդակը, այլև դրանց աճի կանխատեսումը, ինչը կարող է համարվել որպես DCF մոդելի բարելավված տարբերակ:

Ինչպես հայտնի է զեղչման (դիսկոնտավորման) բանաձևերում ցուցանիշների ստացման բարդության առումով իր ուրույն տեղն ունի զեղչման տոկոսադրույքի որոշումը:

Առաջարկվող բանաձևային մոդելում զեղչման տոկոսադրույքի ստացումը հարկ է նույնացնել ընկերության կապիտալի միջին կշռված արժեքի (WACC) որոշմամբ՝ ընկերության կողմից գյուտի, հայտնագործության և արդյունաբերական նմուշի՝ որպես ոչ նյութական ակտիվի ներդրման նախագծի ֆինանսավորման և հետագա արդյունավետության գնահատման համատեքստում:

Ավանդական WACC-ը, ինչպես հայտնի է, ներկայացնում է պարտքային և սեփական կապիտալների համակցությունը՝ հետևյալ կերպ⁴⁸.

$$WACC = w_d k_d (1 - T) + w_e k_e \quad (7)$$

որտեղ՝

w_d -ն և w_e -ն համապատասխանաբար ներկայացնում են նախագծի ֆինանսավորման մեջ պարտքային և սեփական կապիտալի բաժինները,

T - շահութահարկի դրույքաչափը (արտահայտված միավորով),

k_d - փոխառու կապիտալի շուկայական արժեքը (բանկային տոկոսադրույքը),

k_e - սեփական կապիտալի շուկայական (պահանջվող) շահութաբերության տոկոսադրույքը (սովորաբար կիրառվում են՝ զուտ շահույթի և սեփական կապիտալի հարաբերությունը):

Այսպիսով, առաջարկվող մոդելը հիմնված է եկամտային մոտեցման սկզբունքի վրա, որի էությունը կայանում է ոչ

⁴⁸ Shiguftha Hena Uzma, J.P. Singh, Naveen Kumar, Discounted Cash Flow and Its Implication on Intangible Valuation, Global Business Review, 11, 3 (2010): 365–377, <https://doi.org/10.1177/097215091001100304>.

նյութական ակտիվից առաջացող ապագա դրամական հոսքերի ներկայացման և զեղչման մեջ՝ հաշվի առնելով դրանց դինամիկան և կանխատեսվող աճը: Այդ նպատակով բերված բանաձևերի համակցված կիրառումը հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատել տվյալ ակտիվի ներկայիս եկամտաբերությունը, այլև արտացոլել դրամական հոսքերի զարգացման միտումները ժամանակի ընթացքում:

Եզրափակելով՝ անհրաժեշտ է նշել, որ ոչ նյութական ակտիվների շուկայական արժեքի որոշման առաջարկվող բանաձևային մոդելը, հիմնված դրամական հոսքերի դինամիկ փոփոխության և զեղչման համակցված կիրառման վրա, ունի գործնական նշանակություն՝ հատկապես կիրառական մեթոդաբանության առումով: Այն հնարավորություն է տալիս հաշվապահական և ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունների շրջանակներում արդյունավետորեն գնահատել գյուտի, հայտնագործության և արդյունաբերական նմուշի շուկայական արժեքները՝ ապահովելով հաշվարկների ամբողջականությունը, կանխատեսումների հիմնավորվածությունը, ինչպես նաև համադրելի արդյունքների ստացումը միջազգային գնահատման ստանդարտներով սահմանված սկզբունքներին համապատասխան⁴⁹:

⁴⁹ Մամիկոնյան Կ., Գալստյան Է. Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների՝ որպես ոչ նյութական ակտիվների իրական արժեքների որոշման կիրառական մեթոդաբանության հարցերը, «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ ՓԱԲ, համար 14. 2025

Օգտագործված գրականություն

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք:
2. «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք:
3. Միջազգային գնահատման ստանդարտներ (IVS)
4. Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտ (IFRS):
5. Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներ (IAS):
6. ՀՀ կառավարության 24.08.2022թ.-ի N 1355-Ն որոշմամբ հաստատված Գնահատման ընդհանուր ստանդարտ:
7. Մամիկոնյան Կարեն, Փիլյոյան Անուշ. Համակարգչային ծրագրի՝ որպես ոչ նյութական ակտիվի արժեքի որոշման մեթոդաբանության հարցերը դատական ֆինանսատեսագիտական փորձաքննությունների շրջանակներում, «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ ՓԱԲ, համար 11. 2024
8. Մամիկոնյան Կարեն, Գալստյան Էդուարդ. Գյուտերի, հայտնագործությունների և արդյունաբերական նմուշների՝ որպես ոչ նյութական ակտիվների իրական արժեքների որոշման կիրառական մեթոդաբանության հարցերը, «Դատական փորձաքննության և քրեագիտության հայկական հանդես» ՀՀ ԳԱԱ ՓԱԲ, համար 14. 2025
9. Азгальдов Г.Г., Карпова Н. Н. Оценка стоимости интеллектуальной собственности и нематериальных активов. М.: Международная академия оценки и консалтинга, 2006. 398 С., էջ 84-85:
10. Бричка Е.И., Методы определения ставки дисконтирования в оценке стоимости интеллектуальной собственности венчурного предприятия. / Финансовая аналитика: проблемы и решения, 28 (214) – 2014.

11. Ваганова Е.В., Земцов А.А., Миньков С.Л., Оценка стоимости разработки программного продукта: обзор // Проблемы учёта и финансов № 1(21) 2016.
DOI:<https://doi.org/10.17223/22229388/21/8>.
12. Джеймс Р. Хнтчнер, Оценка стоимости нематериальных активов / Под научн. ред. В.М. Рутгайзера. — М.: Маросейка, 2008. — 144 с. - (Серия «Финансовое оценивание. Области применения и модели»), 57-58.
13. Дорофеев А.Ю., Филатов В.В., Медведев В.М., Фадеев А.С., Шестов А.В., Дадугин М.В. Методология оценки нематериальных активов / Интернет-журнал «НАУКОВЕДЕНИЕ» Том 7, №1 (2015) <http://naukovedenie.ru/PDF/95EVN115.pdf> (доступ свободный).
DOI:<https://doi.org/10.15862/95EVN115>.
14. Леонтьев Б.Б., Мамаджанов Х.А. /Принципы и подходы к оценке интеллектуальной собственности и нематериальных активов. Учеб. пособие. М.: Ринфо, 2003. 270 с.
15. Мамиконян К.О. Особенности оценки рыночной стоимости объектов интеллектуальной собственности при проведении судебных экспертиз / Теория и практика судебной экспертизы. 2019. Том 14. № 2. С. 128–135. DOI:<https://doi.org/10.30764/1819-2785-2019-14-2-128-135>.
16. Мамиконян К.О. Подходы оценки рыночной стоимости компании методом дисконтирования будущих денежных потоков при проведении финансово-экономических экспертиз: / Проблемы и вопросы современной науки. «Тенденции развития науки и образования» Декабрь 2018 г. №1(1), Часть 4 Изд.
DOI:<https://doi.org/10.18411/pivsn-58>.
17. Мясников М.Р. Концептуальная модель оценки стоимости сложных заказных программных продуктов // Креативная экономика. – 2018. – Том 12. – № 3. – С. 367-384.
DOI:<https://doi.org/10.18334/ce.12.3.38891>.

18. Петрикова Е.М. и другие, Методы оценки стоимости нематериальных активов, /Проблемы. мнения. Решения, 2 (282) – 2015/.
19. Пирогов О. Е., Павлова С. В., Стоимости товарных знаков на основе учета стадий жизненного цикла бренда / Международный научный журнал №6 (81) 2021. DOI:<https://doi.org/10.34286/1995-4638-2021-81-6-39-45>.
20. Сорокина Е.М., Фадеева А.А., Оценка нематериальных активов в бухгалтерском учете, /Международный бухгалтерский учет, проблемы учета 5 (251) – 2013.
21. Хатунцев Н.А. К вопросу определения стоимости объектов судебной компьютерно-технической экспертизы // Теория и практика судебной экспертизы. 2021. Т. 16. № 3. С. 81–87. DOI:<https://doi.org/10.30764/1819-2785-2021-3-81-87>.
22. Чихирников А.М., Определение ставки дисконтирования методом кумулятивного построения / Азимут научных исследований: экономика и управление, 2015. № 3 (12).
23. Юсупова О. А. Клиентоориентированный подход в оценке качества сайта грузоперевозочной компании при обслуживании частных клиентов // Омский научный вестник. Сер. Общество. История. Современность. 2022. Т. 7, № 2. С. 141–147. DOI:<https://doi.org/10.25206/2542-0488-2022-7-2-141-147>.
24. Atika Nashirah Hasyati, Adhi Kurniawan, Measuring Intangible Assets Using Parametric and Machine Learning Approaches // BPS – Statistics Indonesia (2022). URL: <https://arxiv.org/pdf/2212.03025>.
25. Bontis, N. (2018). Intellectual capital: An exploratory study that develops measures and models. *Journal of Management Studies*, 36(1), 63–74. DOI:<https://doi.org/10.1111/1467-6486.00078>
26. Bulgarelli F. /Methods of Brand Valuation: A case study on Alibaba.com. 2015:

27. Darya Dancaková, Jozef Glova, The Impact of Value-Added Intellectual Capital on Corporate Performance: Cross-Sector Evidence // *Risks* 2024, 12. 151. DOI: <https://doi.org/10.3390/risks12100151>.
28. Investment valuation: tools and techniques for determining the value of any asset / Aswath Damodaran.— 3rd ed. pub. by John Wiley & Sons, 2012.
29. Kaoutar Benmoumen, Abdelkader Charba, Valuation of Intangible Assets under IAS/IFRS: Accounting Challenges and Perspectives // *International Journal of Accounting, Finance, Auditing, Management and Economics – IJAFAME*, DOI: <https://doi.org/10.5281/zenodo.14927687>.
30. Lev, B. (2019). *The End of Accounting and the Path Forward for Investors and Managers*. Wiley.
31. Lev, B., & Gu, F. (2016). *The End of Accounting and the Path Forward for Investors and Managers*. John Wiley & Sons.
32. Nielsen J.M. // *Guidance for Applying the Relief from Royalty Method to Value Trademarks and Trade Names / Insights*. 2018. P. 52–58//.
33. Petty, R., & Guthrie, J. (2020). Intellectual capital literature review: Measurement, reporting and management. *Journal of Intellectual Capital*, 1(2), 155–176.
DOI:<https://doi.org/10.1108/14691930010348731>
34. Reilly R.F., Schweihs R.P. *Guide to Intangible Asset Valuation*. 2nd Revised Edition. New York: Wiley, 2016. 784 p.
35. Roberto Moro-Visconti, The Valuation of Intangible Assets: An Introduction // *SSRN Electronic Journal* • January 2019.
DOI:<https://doi.org/https://doi.org/10.2139/ssrn.3413524>.
36. Sveiby, K. E. (2010). Methods for measuring intangible assets. *Journal of Intellectual Capital*, 1(1), 68–84.
DOI:<https://doi.org/10.1108/14691930110385932>.
37. Shigufta Hena Uzma, J.P. Singh, Naveen Kumar, Discounted Cash Flow and Its Implication on Intangible Valuation, *Global Business*

Review, 11, 3 (2010): 365–377,
DOI:<https://doi.org/10.1177/097215091001100304>.

38. Tomohiro Yamaguchi, Intangible Asset Valuation Model Using Panel Data // *Asia-Pacific Financial Markets*, Volume 21, March 2014, DOI: <https://doi.org/10.1007/s10690-014-9181-z>.
39. Henri Hussinki, Tatiana King, John Dumay, Erik Steinhöfel, Accounting for intangibles: a critical review // *Journal of Accounting Literature* (8 February 2024), DOI: <https://doi.org/10.1108/JAL-05-2022-0060>.

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի
գիտական հետազոտությունների և տեխնիկական փորձարկումների
համակարգման բաժնի պետ,
տնտեսագիտական և հաշվապահական փորձաքննությունների
բաժնի փորձագետ:

КАРЕН ОГАНЕСОВИЧ МАМИКОНЯН
кандидат экономических наук, доцент,
*начальник отдела координации научных исследований
и технического апробирования,
эксперт отдела экономических и бухгалтерских экспертиз
Национального бюро экспертиз Республики Армения.*

KAREN H. MAMIKONYAN
Ph.D in Economics, Associate Professor,
*Head of the Scientific Research and Technical Testing
Coordination Department,
Expert of the Department of Economic and Accounting Expertise
of National Bureau of Expertises of the Republic of Armenia.*

ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Մեթոդական ձեռնարկ

Հեղինակային հրատարակություն

**ԵՐԵՎԱՆ
2025**

Չափսը՝ 60x84 * 1/16:
Ծավալը՝ 4.8 տպ. մամուլ:
Տպաքանակը՝ 350: